

ՀԱՐԻՐԻ ՍԷՈՒՏԱԿԱՆ ԱՐԱՔԻԱ ՄԵԿՆԵՅԱԿ

Վարչապետ Ռաֆիկ Հարիրի երկն յետմիջօրեին մեկնեցաւ Սէուտական Արաբիա, ուր սէուտցի պաշտօնատարներու հետ պիտի քննարկէ երկկողմանի յարաբերութիւնները, շրջանային պարագայները եւ արաբական վեհաժողովին կապուած հարցեր:

Հարիրի Սէուտական Արաբիայէն պիտի մեկնի Ֆրանսա, ուր Կիրակի օր նախագահ Ժաք Շիրաքի հետ պիտի քննարկէ Միջին Արեւելքի պայթուցիկ վիճակը: Քննարկուի առարկայ պիտի դառնան նաեւ Լիբանան - Ֆրանսա յարաբերութիւնները եւ շրջանային այլ քայլեր:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԿՈՂՋՈՒՆԷ ՖՐԱՆՍԱՅԻ ԿԵՑՈՒԱԾՔԸ

Նախագահ զօր. էմիլ Լահուտ երէկ ընդունեց Ֆրանսայի դեսպան Ֆիլիպ Լը Բուրթիէն եւ Հանդիպումին ընթացքին հաստատեց, որ Եւրոպական Միութեան արտաքին գործոց նախարարները Սպանիոյ մէջ գումարուած իրենց ժողովին արար-իսրայէլեան հակամարտութեան զծով ողջունելի կեցուածք որդեգրած են: Ան նաեւ դրուատեց Միջին Արեւելքի պայթուցիկ իրավիճակին եւ Լիբանանի նկատմամբ Ֆրանսայի կեցուածքները:



Ֆրանսայի դեսպանը նախագահ Լահուտի մօտ:

Լը Բուրթիէն յայտնեց, որ նախագահ Լահուտը ասած է, որ եթէ Եւրոպայի կեցուածքը կ'ուզէ վերածել Միջին Արեւելքը ողբերգական այս վիճակէն դուրս բերելու նախաձեռնութեան մը, ապա այդ ժողովին րանաձեռնած մտքերը կրնան արծարծուիլ եւ քննարկուի Մարտին Պէյրութի մէջ գումարուելիք արաբական վեհաժողովին:

Հանդիպումին արծարծուեցան այս վեհաժողովին գումարուելին, անոր առաւելագոյն թիւով արար ղեկավարներու եւ պաղեստինցի ղեկավար Եասէր Արաֆատի ներկայութիւնը ապահովելու Լիբանանի ճիգերը:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Միւս կողմէ, նախագահական պալատի տեղեկատուութեան զբա-

սենեակը երէկ յայտարարեց, որ նախարարաց խորհուրդը նախանցեալ օրուան իր նիստին նախագահ Լահուտի պաշտօնակազմը որոշած է սահմանափակել պետական վարչութիւններու համար վարձուած շէնքերու կամ յարկաբաժիններու թիւը:

Արդարեւ, ժողովին դրուեցաւ վարչամեքենայի բարգաւաճման նախարարութեան գրասենեակներու համար վարձել 200 մ. տարածութիւն, մեթրը՝ 150 տոլար: Հոս նախագահ Լահուտ նկատելի տուաւ, որ պետութիւնը կ'աւելցնէր ունի Պէյրութի եւ բոլոր շրջաններուն մէջ, ուստի պետութեան վարչութիւններու նման կարիքի պարագային կարելի է կառուցել շէնքեր, մէկ կողմէ խնայելով վարձքերու ծախսը, եւ միւս կողմէ պետութիւնը կը շահն արդիական եւ պէտքերուն համապատասխան կառուցում ունեցող շէնք:

Ժողովը որդեգրեց նախագահ Լահուտի տեսակէտը եւ որոշեց հետազոտութեան վարչութեան պահանջել պետութեան վարձած կառուցներուն եւ անոր պատկանող կալուածներուն մասին վիճակագրութիւն մը:

ԻՍԼԱՄ ՈՒՄՏԱԻՈՐՆԵՐ ԶԵՆ ԿՐՆԱՐ ԱՖՂԱՆԻՍՏԱՆԷՆ ՄԵՔԵՒ ՈՒՂՂՈՒԻԼ

Աֆղանիստանի փոխանցման կառավարութեան տեղեկատուութեան նախարար Ռահիմ Մախտում երէկ յայտնած է, թէ օղալիս յոսիսադրութեան եւ զօսաշրջութեան նախարար Ապտիլ Ռահման, որ Հինգշաբթի օր Քապուլի օղալիսային մէջ ցմահ ծեծուած էր, ահարեկուած է:

Քապուլի մէջ տեղի ունեցած մամուլ ասուլիսի մը ընթացքին, Մախտում յայտնած է, թէ ղէպքը խումբ մը մարդոց անձնական վրիժառուութեան եւ թշնամութեան հետեւանք է: «Անիկա քաղաքական արմատներ չունի», աւելցուցած է ան: Կ'ենթադրուէր, թէ Ռահման ծեծուած է զայրացած ուխտաւորներու

ԻՍՐԱԵԼԵԱՆ ՈՒՑԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ ՎԱՅՐԱԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՆՁԷՆ ՊԱՂԵՍՏԻՆՅԻՆԵՐՈՒ ԴԷՄ

ԱՆՇԱԿԱԿՇԻՌ ԿԱՅՈՒԹԻՒՆ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Պաղեստինեան շրջաններուն մէջ բախումները, իսրայէլեան ուժերուն ներխուժումը, ինչպէս նաեւ իսրայէլեան բանակին դէմ պաղեստինեան յարձակումները շուքի մէջ ձգեցին երոպական խաղաղար ճիգերը:

Արեւածագին, իսրայէլեան ուժեր պաղեստինեան երկու գիւղեր ներխուժեցին Այսրյորդանանի հիւսիսային շրջանին մէջ, ուր սպաննեցին մէկ հոգի եւ քանի մը ուրիշներ ալ ձերբակալեցին: Բանակը յայտնեց, որ ձերբակալած է մարդիկ, որոնք մեղսակցած են իսրայէլացիներու դէմ յարձակումներու: Ներխուժումը կը յաջողէր պաղեստինեան յարձակումի մը իսրայէլեան ուժերուն դէմ, Կապուլի մէջ: Պաղեստինցիներ Հինգշաբթի գիշեր թակարդի մէջ



Պաղեստինցի պատանի մը կը քարկոծէ իսրայէլեան ուժերուն մէկ հրասայլը:

ձգած էին հրեայ բնակիչներու կարասան մը: Ըստ երեւոյթին անոնք դուր լարած էին, որպէսզի իսրայէլեան հրասայլ մը մօտենայ միջադէպին

վայրին, ու ականի մը վրայէն անցնելով՝ մը, որ խորհրդանիշն է իսրայէլեան պիսուրական ուժին: Գործուած էր յաջողած են

պայթեցնել «Մերքաւա-3» տիպի հրասայլ մը, որ խորհրդանիշն է իսրայէլեան պիսուրական ուժին: Գործուած էր յաջողած են

Շար.Պ՝ էջ 10

ՄԻԼՈՇԵՒԻՉ ՕԹԱՆԸ Կ'ԱՄԲԱՍՏԱՆԷ ԱՆԱՍՆԱՅԻՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԵԼՈՒ ՅԱՆՑԱՆՔՈՎ

Լա Հեյի ՄԱԿի պատերազմական ոճիրներու ատեանին մէջ, Եուկոպալիոյ նախկին նախագահ Սլոպոտան Միլոշեւիչ երէկ դարձաւ յարձակողականի անցած է, ՕԹԱՆը ամբաստանելով Եուկոպալիոյ մէջ «անասնային» ցեղասպանութիւն գործած ըլլալու յանցանքով եւ Մ. Նախագահներու նախկին նախագահ Պիլ Բլիւթընէն է արեւմտուքի այլ ղեկավարներէ պահանջելով, որ ատեանին մէջ վկայութիւն տան: «Հարց կու տամ, թէ ասիկա ի՞նչպիսի ատեան մըն է, եթէ դուք կը մերժէք դատել մարդիկ՝ ՕԹԱՆի երկիրներուն բանակներուն եւ ղեկավարներուն կողմէ գործուած ոճիրներու համար», ըսած է Միլոշեւիչ դատաւորներուն:

Դատախապներու բացման խօսքերուն տրուած իր պատասխաններուն երկրորդ օրը, Միլոշեւիչ 1990ական թուականներու արիւնահեղութեան համար ամբողջութեամբ այսպիսի է պալքանեան իր թշնամիները եւ ՕԹԱՆը:

Ըստ նախատեսութեան, մարտի 9-ին դատաւարութիւն մը ըլլալիք գործընթացին չորրորդ օրը, ան պնդած է, թէ 1999ին Եուկոպալիոյ դէմ ՕԹԱՆեան օղալիս նմանութիւններուն ընթացքին հարիւր հազարաւոր ծագումով այսպիսի ցեղացիները, որոնք խոյս տուած են Քոսովոյէն, սերպերու կողմէ չէ, որ դուր մղուած են՝ ինչպէս միջազգային մամուլն ու ղեկավարները հաղորդած են, այլ՝ այսպիսի ցեղացիներու կողմէ:

Քոսովոյի Ապտագրութեան Բանակը, որ պիտեայնէր խմբակ մըն էր, Քոսովոյէն խոյս չտուող բոլոր այսպիսիները «դաւաճաններ» կոչած է, ըստ Միլոշեւիչի, ստեղծելով այն խաբկանքը, թէ անոնք սերպերու կողմէ կը մղուին հեռանալու:

Դրդապատճառը ՕԹԱՆեան յարձակումները արդարացնել էր, ըսած է ան:

Միլոշեւիչ ատեանին մէջ ցոյց տուած է քաղաքայիններու ածխացած դիակներու լուսանկարներ. անոնք սպաննուած են 1999ին ՕԹԱՆեան նմանութիւններու պատճառով՝ Քոսովոյի եւ Սերպիոյ մնացեալ բաժինին վրայ:

Ինչ կը վերաբերի Պելկրատի մէջ Չինաստանի դեսպանատան նմանութիւններ, որ ըստ Ուաշինգթոնի, Մի. Այ. Էյ. թիրախներ ծրագրողներու մէկ սխալին պատճառով էր, անիկա արկած մը չէր:

Յստակ է, թէ Քլիւթըն կ'ուզէր պատմութեան անցնիլ իբրեւ առաջին անձնաւորութիւնը. որ չինական հողամաս կը նմանութիւն՝ չինական դեսպանատանը նմանութեամբ, ըսած է Միլոշեւիչ:

Սակայն Մ. Նախագահներէ աւելի, Գերմանիան էր, որ յատկապէս դատապարտուած է Միլոշեւիչի կողմէ: Ան ըսած է, թէ անիկա քանդած է նախկին համայնավար Եուկոպալիան՝ Կորալիկ կանգնելով Սլովենիոյ եւ Սլովակիոյ անկախութեան եւ գաղտնօրէն Կորալիկներու հայրապետելով այսպիսի «սաքրեկիւններու»:

Արձագանգելով իր դէմ ուղղուած ամբաստանութեանց լեզուին, Միլոշեւիչ յայտնած է, թէ Արեւմուտքը «ցեղասպանութեան եւ մարդկու-

Շար.Պ՝ էջ 10

ՁՈՒՐՔԻԱ

ԶՈՄՍՔԻԻ ԴԷՄ ՓԱՏՏԵՐ ԳՏՆԵԼՈՒ ԺԻԳԵՐ՝

ԻՇՆԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ

ՏԻԱՐՊԵՔԻՐ, 15 (ՌՈՅԹԸՐԸ).— Թրքական ապահովութեան ատեան մը Ուրբաթ օր սկսած է քննել փաստեր՝ ամերիկացի ակադեմիական Նոամ Չոմսքիի դէմ, մեծամասնութեամբ քիւրտ բնակչութիւն ունեցող Տիարպեքի բաղաձայն յայտնութեան մը ընթացքին անջատողականութիւն հրահրած ըլլալու յանցանքով: Ոստիկանութիւնը ատեանին յանձնած է ձայնըրիզներ եւ Չոմսքիի արտայայտութիւններուն թարգմանութիւնը: Ան իբրեւ թէ յոյս յայտնած է, թէ ի վերջոյ քրտական անկախ պետութիւն մը պիտի հաստատուի:

Եթէ ատեանը ոճիրի փաստ գտնէ, անիկա կրնայ որոշել Չոմսքիին դատապարտել:

Չոմսքիի դէմ գաղտնի պիտի դիտուի նաեւ Թուրքիոյ Ե. Միութեան անդամակցելու տենչերուն ծիրէն ներս:

Ե. Միութիւնը կող ուղղած է Թուրքիոյ, որ մտքի եւ խօսքի ազատութիւնը սահմանափակող օրէնքներ:

Շար.Պ՝ էջ 10

ՕՍԽՈՒ ԶԵՂ ԶԱՐԿԱՎՈՒՆՆԵՐ ԵՒ ԽԱՆՈՒԹՆԵՐ ՄՃԵՐԻ ՍԿԻՉԲԸ - ԱՆԹԻԼԻԱՍ -

160 քառ. մէթր, 3 ննջասենեակ, ճաշասենեակ, հիւրասենեակ եւ երկու բաղնիք: Գեղատեսիլ վայր եւ ծովահայեաց դիրք:

● **Վճարման դիւրութիւններ:**

Սանրամասնութեան համար դիմել՝ հեռաձայն 04 - 523926 եւ 03 - 666296:

ԱՐԱՄ Ա. ԲԱՐԻ ԱՊԱՔԻՆՈՒՄ ՄԱՂԹԵՑ ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆԻՆ

Արամ Ա. կաթողիկոս երկ կարի ապաքինման իր մաղթանքները լղեց Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեանին, որ երկու օր առաջ վիրաբուժական գործողություն մը ենթարկուած էր Երևանի մէջ:

Վեհափառը շուտափոյթ ապաքինում կը մաղթէր նախագահին, որպէսզի շարունակէ իր հայրենասիրական ծառայութիւնը՝ ի սպաս մեր ժողովուրդին ու հայրենիքին:

ՍԵՓԱԿԱՆ ՄԱՐԶԸ ՊԷՏՔ Է ՄԱՍՆԱԿԻՑ ԴԱՌՆԱՅ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԶԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԻՆ

Կ'ԸՍԷ ՄԻՆԻՐՈՒՐ

Ելեմուտքի նախարար Ֆուատ Սինիորա երկ ընդգծեց, որ սեփական մարզը մասնակից պէտք է ըլլայ պետական մարզի արդիականացումին եւ գործակցի օրէնքներու եւ միջոցառումներու գործադրութեան համար:

Ելեմուտքի ակադեմիային մէջ ելեկտրոնիկ ծառայութիւններու համակարգումի բացումին առիթով արտասանուած իր խօսքին մէջ, Սինիորա վերահաստատեց, որ կառավարութեան քաղաքականութեան հիմն է սեփական մարզին հետ պօրակցութիւնն ու տնտեսական վերականգնումին մէջ անոր աւելի մեծ դերակատարութիւնը:

Սինիորա նաեւ ըսաւ, որ մաքսային աշխատանքին օժանդակող համակարգչային այս կայմածներու գործածութիւնը կը վերացնէ այս ծիրէն ներս խոչընդոտներ եւ կը դիւրացնէ Լիբանանի մասնակցութիւնը միջազգային տնտեսութեան:

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՄԻՍԱԼ ԶԻ ԹՈՅԼԱՏՐԵՐ

Կ'ԸՍԷ ՄԻՔԱԹԻ

Հանրօգուտ աշխատանքներու եւ փոխադրամիջոցներու նախարար Նածիպ Միքաթի երկ ըսաւ, որ կառավարութիւնը լրջութեամբ պիտի շարունակէ բարեկարգչական քայլեր առնել, որպէսզի տնտեսակներ ըլլան տնտեսական փրկութեան աշխատանքին:

«Վիճակը այն աստիճան վատթարացած է, որ ալ թոյլատրելի չէ վարանի, եւ հարցերը շատ բարդացած են, հետեւաբար անհրաժեշտ է արագ շարժիլ քաղաքական եւ ժողովրդային պօրակցութեամբ», ըսաւ ան:

Միքաթի պարմանք յայտնեց այն յայտարարութիւններուն համար, որ կ'ըսուի, թէ առեւտրական մենաշնորհներու ջնջումը անսահման սանձարձակութիւն եւ քառային վիճակ պիտի ստեղծէ, մինչ այս քայլը վերջ պիտի դնէ ոմանց մենաշնորհներուն եւ առիթ պիտի տայ մրցակցութեան:

ՖԻՖԱԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՅՅԵԼԵՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՊԵՏԵՐՈՒՆ

ՖԻՖԱԻ նախագահ Ժոզէֆ Պլեթըր երկ Երեւանի մէջ ՖԻՖԱԻ եւ Ասիոյ ֆետերասիոնի անդամներէ բաղկացած պատուիրակութեան մը ընկերակցութեամբ ժամանեց Պէյրութ եւ այցելութիւններ տուաւ իշխանութեան երէք պետերուն:



Այցելութիւնը նախագահին:

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտի հետ Պլեթըրի հանդիպումին ներկայ գտնուեցան երիտասարդութեան եւ մարմնակրթութեան խորհրդարանական յանձնախումբի նախագահ Էմիլ Էմիլ Լահուտ, Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնի նախագահ Հաշէմ Հայտար, ընդհանուր քարտուղար Պահիժ Ապու Համպէ եւ անդամ Շորժ Սոլամ, ինչպէս նաեւ Մարպական խմբագիրներու Միութեան նախագահ Խալիլ Նահաս:

Նախագահ Լահուտ դրուատիքով խօսեցաւ աշխարհի ամենէն մեծ ժողովրդականութիւնը ունեցող այս մարզածեւի տարածումին, պարագայուն եւ նոր կանոններու որդեգրումին ուղ-

ղութեամբ ՖԻՖԱԻ ճիգերուն մասին:

Ան նաեւ շնորհակալութիւն յայտնեց ՖԻՖԱԻ կողմէ Լիբանանի ֆետերասիոնին տրամադրուած օժանդակութիւններուն եւ պօրակցութեան, որոնց նպատակն է վերականգնել այս մարզածեւը, եւ ըսաւ, որ պետութեան ու երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութեան միջոցները ֆետերասիոնի տրամադրութեան տակ են:

Պլեթըր դրուատեց Լիբանանի ֆետերասիոնի դերակատարութիւնը, անոր արձանագրած յառաջ-

դիմութիւնը, լիբանանեան ֆուտբոլի նոր թափը եւ Ա. դասակարգի խումբերու փայտանութեան կայմակերպումը: Ան ընդգծեց անհրաժեշտութիւնը՝ մրցումներու եւ փորձերու դաշտերուն, ինչպէս նաեւ կարիքը ֆետերասիոնի կեդրոնատեղիի մը:

Պլեթըր նախագահ Լահուտի նուիրեց ՖԻՖԱԻ պիւնաշան յուշանուէրը առ ի գնահատանք այն «նախագահին, որ լիբանանեան մարմնաշինարարութեան իրաւունքը տուաւ եւ միշտ պօրակցական կանգնեցաւ անոր»:

Յ. Ա. ՏՈՒՐՔԻ ՄԻՍԱԼ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ ՊԷՏՔ Է ՍՐՔԱԳՐՈՒԻ

Կ'ԸՍԷ ՇԵՅՆ ՔԱՊԱԼԱՆ

ՄԻՖԻՆԵՐՈՒ ԳԵՐԱՊՈՒՆՈՒՐԴԻ փոխ նախագահ Շէյխ Ապու Էմիլ Էմիլ Քապալան երկ արտասանուած իր քարոզին մէջ մաղթեց, որ վերջ կը դրուի առեւտրական մենաշնորհներու ջնջումին շուրջ բանավեճին:

Շէյխ Քապալան նկատել տուաւ, որ այս քայլը պաշտպանելու համար կը խօսուի քաղաքացիին շահերուն մասին, որոնք առաջնահերթութիւն պէտք է ըլլան, եւ ո՛չ թէ պատրուակ որոշումներուն, որոնց նպատակն է քողարկել նախկին որոշումներու ծխական անդրադարձը:

Շէյխ Քապալան բացատրեց, որ առեւտ-

րական մենաշնորհներու ջնջումը չի կրնար քողարկել լայնելեալ արժէքի տուրքի սխալ գործադրութիւնը, զոր անհրաժեշտ է սրբազրել:

«Շնչապարկ եւ աղքատ լիբանանցի կը վճարէ այս տուրքը, որուն շուրջ կը վիճաբանին կառավարութիւնն ու վաճառականները, առանց գիտնալու, թէ անոնց մէջ որո՞նք կ'երթայ իր վճարած գումարը, եւ կը սպասէ տեսնելու մէկ պետական որոշում, որ իր շահերուն կամ իրեն կը ծառայէ», ըսաւ ան:

Միւս կողմէ, քարիզի ընկերութիւններու աշխատատեղերու եւ պաշտօնատեղերու սեն-

տիքային նախագահ Մայմուն Խաւուի երկ քննադատեց կառավարութեան այն որոշումը, որուն հիմամբ ապատ կը դառնայ վառելիքի թերութիւնը:

«Ասիկա կամայական որոշում մըն է, որ ո՛չ սպառողին նպատար է, ո՛չ ալ պետական գանձարկին, այլ՝ քարիզի մաքսային, որուն կատարեալ հակազդեցիկ տակ պիտի իյնայ քարիզի շուկան, եւ անոր կամքէն կարեալ պիտի դառնան այս վառելիքի թերութիւնը սակերն ու պագային պահեստը», ըսաւ ան:

Շարք՝ Էջ 10

ԼՍԵՆՔ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԵԱՆ ԶԱՅՆԸ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳԱՅ ՄԻՋԹԵՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՏԵՐ ԶՕՐԻ ՄԷՉ

Հովանաւորութեամբ՝

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍՒՄԻ ՄԵԾԻ ՏԱՆԵ ԿԻԼԻԿԻՈՅ

Նիւր՝

«ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄԸ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԵԱՆ ՏԵՍԱՆԿԻՒՆԵՆ»

Տեղի կ'ունենայ 21-24 Ապրիլ 2002ին, Տեր Զօրի մէջ: Կը մասնակցին բոլոր թեմերը ներկայացնող երիտասարդներ՝ 18-35 տարեկան:

• Զրոյց, կլոր սեղան, դասախօսութիւններ, աշխատանքային խմբակներ, Ս. պատարագ, շրջապտոյտ:

Բոլոր դասախօսութիւններն ու զրոյցները հայերէնով պիտի տրուին: Մասնակցիլ փափաքողները կրնան դիմել իրենց տեղույն Ազգային առաջնորդարանը, մինչեւ Փետրուար 2002ի աւարտը:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

• Աւետիս Թուխմանեանի (մահացած՝ Բանատա) մահուան քառասունըօրն առիթով, Յարութիւն Առաքելեան եւ գաւազը՝ 75,000 լ.ո., ԼՕՄԻ «Շեղուշ Փափագեան» (Ռաուտա) մասնաձիղին: (Ստանալ՝ հեռ. 256350):

ԾԱԽՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ

• Պուրճ Համուտ, Սանթր ԱՐԻՆ, 6րդ յարկ, 42 ք.մ.: Յարմար գին եւ վճարման դիւրութիւն: Հեռ. 03-921002:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԹՈՐՈՍ ԴՈՍԼԻՆ ԿԵՐԱՐՈՒԹԵՍԻ ԱԿՎԱԳԵՄԻԱ

ՁԻՆԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԳԷՊԻ ՔԱՆԱԳ ՊԱՔԻՇ SNOW LAND HOTEL

Կիրակի, 17 Փետրուար 2002ին

• Մեկնում՝ «Շաղգոյեան» կեդրոնէ առաւօտեան ժամը 9:30ին

• Փոխադրութիւնը՝ փոքր եւ հանգստաւետ պատեցող

• Կետրուան ձաշ՝ Snow Land պանդոկի ձաշարահին մէջ

• Ski piste, tele siege, Jet ski եւ ձիւնակառքով պտոյտ փափաքողներուն

• Սակ.՝ Մեծերու 20 \$, պոստիկներու 10 \$ (12 տարեկան)

Տոմսերը ապահովել «Լեւոն Շանթ» կեդրոնէ, Համագայինի գրաստանէ «Շաղգոյեան» կեդրոն եւ Չոքաք Էլ Պլաք ձեմարանէ:

ԳՐԱԴՈՒԱԾ ՕՐ

Հ. Յ. Դ. «ՈՒԲԵՆ» ԱԿՈՒՄԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

11 ՄԱՅԻՍ 2002

ԳՐԱԴՈՒԱԾ ՕՐ

Հ. Յ. Դ. «ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ» ԿՈՄԻՏԵ

ՃԱՇԿԵՐՈՅԹ

23 ՄԱՐՏ 2002

«Ա.Զ.Գ.Ա.Կ»-ի ՀԵՌԱԶԱՅԻՆ ԹԻԻԵՐԸ

«Ա.Զ.Գ.Ա.Կ»-ի հետ կապուելու համար հեռաձայնը հետեւեալ թիւերուն.՝ 258526, 260115 եւ 241274:

ԹՄԵՑՈՒՑԻՉԻ ՑԱՆՔԸ ՊԻՏԻ ՓՃԱՑՈՒԻ

Ներքին գործոց նախարար Էլիաս Մըր երկ այցելեց Յոյն Ուղղափառներու Պէյրութի առաջնորդ Էլիաս Աուտէ եպիսկոպոսին, ապա յայտարարեց, որ անոր ներկայացուցած է արար ներքին գործոց նախարարներու ժողովին արդիւնքները: Ան ներողութիւն խնդրեց այդ ժողովին ապահովութեան միջոցառումներուն պատճառած խճողումին համար:

«Փետրուարի վերջերուն, ապահովութեան ուժերը բանակի պօրակցութեամբ պիտի փճացնեն բոլոր ցանուած թմրեցուցիչ բոյները եւ այս գծով շատ խիստ պիտի գտնուինք, իսկ 2002 տարին պիտի ըլլայ թմրեցուցիչներուն դէմ պայքարի տարի», ըսաւ ան:

Մըր նաեւ յայտնեց, որ երկ սկսած է երէք ամիս տեւող «ապահովական ծրագիր» մը, որ առանց պիտուորական երեւոյթներու եւ քաղաքացիներու հանգստը կամ վրասաշրջութիւնը խանգարելու, քաղաքային պզտուով ապահովութեան անդամներու միջոցով պիտի աշխատի սահմանափակելու որոշ քրեական արարներ:

Նախարար Մըր յայտնեց, որ արարական վեհաժողովի ապահովութիւնը պիտի ստանձնէ նախագահական պահակազունը, որուն պիտի օժանդակեն Ն. Ա. Ուժերն ու ոստիկանութիւնը:

ԴԵՂՈՐԱՅՔԻ ՆԵՐԱԾՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Առողջապահութեան նախարար Սլէյման Յրենժիէ երկ ընդունեց դեղորայք ներածողներու սենտիքայի պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ Արման Ֆարէսի: Քննարկուեցան դեղորայքի մարպին վիճակը եւ այս բնագաւառի միջազգային պարագայունները ուսումնասիրող յանձնախումբին աշխատանքները: Նաեւ խօսուեցաւ ամէն տեսակի դեղորայքի յաւելեալ արժէքի տուրքէն վերջ դարձնելու առաջարկը, առողջապահութեան նախարարութեան մօտ գրանցումին հիմամբ:

Նաեւ քննարկուեցաւ թմրեցուցիչ եւ հանդարտեցուցիչ դեղերու վաճառքին յատուկ համակարգչային դրութեան մը հաստատումը:

ՎԱՌԵԼԱՆԻԹԵՐՈՒ ՄԱԿԱՅՈՅՑ

Ուժանիւթի նախարար Մոհամէտ Ապուէլ Համիտ Պայտունի որոշումով երկ ի պօրու դարձաւ վառելիքի թերութիւնը հետեւեալ սակացոյցը.

98 օքթան պենտիլի թիթեղ՝ 19,900 լ.ո.
Առանց կապարի 95 օքթան պենտիլի թիթեղ՝ 17,700 լ.ո.
Առանց կապարի 90 օքթան պենտիլի թիթեղ՝ 17,500 լ.ո.

Ֆիուլ օյլի քիլոլիթրը 141 տոլար

Այս սակացոյցին մէջ հարիւր լ. ոսկիի յաւելում կրեց պենտիլի թիթեղին գինը, իսկ մէկ քիլոլիթր ֆիուլ օյլի գինը 12 տոլարի բարձրացում արձանագրեց:

ԱՐՅԱՆԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՖՈՆՏԻՆ

• Աւետիս Թուխմանեանի (մահացած՝ Բանատա) մահուան քառասունըօրն առիթով, Յարութիւն Առաքելեան 75,000 լ. ո.:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՀԱՅՐԵՆԻ ՉԱԻԱԽՔ

«Ազդակ»-ի յատուկ հրատարակութիւն: 496 էջ:

• Ստանալու համար դիմել գրախանութներ՝ Համագային, Նարեկացի, Ոսկեղար, Որֆալեան եւ Կոմիտաս:

ԳԻՆ՝ 15.000 լ.ո.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, 17 Փետրուար 2002, երկուցեան ժամը 6:00ին, Հեռատեսիլի Հայկական Պատկերասփիւռն (ATN) պիտի պատկերասփռուի Ազգային Առաջնորդարանի նախաձեռնութեամբ կազմակերպուած Վարդանանց տօնակատարութիւնը, որ տեղի ունեցաւ Հիւնզաբքի, 7 Փետրուար 2002ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» սրահին մէջ:

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

ԼՈՒՐԵՐ ԶԱՒԱՆՔԵՆ

ԹԻՖԼԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Թիֆլիսի իւսանողները Զաւարթի կողմից անուան պետական համալսարանի նախագահ Ռ. Մեթրեբեի 7 Փետրուարին ստորագրած մէկ հրամանով Ախալթա- յայի մէջ բացուած է Թիֆլիսի պետական համալսարանի Զաւարթի մասնաճիւղը:

Ախալթալայի շրջանային վարչութեան նախագահ Արտուր Համբարձումեանի հաւաստած է, որ մասնաճիւղին կազմակերպման հարցերը անուան պետական համալսարանի նախագահի հետ անոր տնօրէնը անպայման Ախալթալայի պիտի ըլլայ: Ան նաեւ նշեց, որ դասախոսութիւններու համար մասնաճիւղներ պիտի հրաւիրուին Երեւանի եւ Թիֆլիսի համալսարաններէն:

Այս տարուան Մարտին պիտի սկսին մասնաճիւղին նախապատրաստական դասընթացները: Սեպտեմբեր մէկին սկսող նոր ուսումնական տարուան ընթացքին առաջին դասարանին մաս պիտի կազմեն 280 ուսանողներ: Անոնցմէ 140 ուսանող ձեռն պիտի ունանի, իսկ միւս 140-ը՝ վճարովի: Մասնաճիւղին մէջ պիտի գործեն հայ - վրացական բանասիրութեան, իրաւաբանութեան, օտար լեզուներու եւ տնտեսագիտութեան բաժանմունքները:

ՈՌՏԱՎԱԿԱՆ ՈՒՋՄԱՎԱՅԱՆԻՆ ՆԵՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ՝ ԶԱՒԱՆՔՅԻՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Վերջին շրջանին վրաստանի բարձրաստիճան պետական պաշտօնատարներ կը նշեն, որ վրացական պետութիւնը իր կարելին պիտի ընէ Ախալթալայի ուսական ռազմակայանին մէջ գործող Զաւարթի գիտնութեան ծառայողներուն աշխատանքով ապահովելու համար:

Այս առնչութեամբ Ախալթալայի մէջ գործող «Զանգ» կուսակցութեան համանախագահ Մելս Թորոսեան յայտնեց, որ վրացական իշխանութիւնները նման քաղաքականութեամբ պարզապէս կ'ուզեն շեշտել ուսական ռազմակայանին՝ Զաւարթին համար ունեցած միայն ընկերային - տնտեսական նշանակութիւնը, մինչդեռ այդ ռազմակայանը ջախջախեցողութեան համար ունի նախ եւ առաջ ֆիզիքական ապահովութեան նշանակութիւն:

Ինչ կը վարաբերի վրացական իշխանութիւններուն այն խոստումին, թէ ուսական ռազմակայանին մէջ աշխատող ջախջախիչներ պիտի ապահովուին աշխատանքով, Մելս Թորոսեան կ'ըսէ, որ եթէ վրացական պետութիւնը կ'ուզէ Ախալթալայի մէջ աշխատանքը ստեղծել, ապա այդ մէկը կրնայ ընել Զաւարթի մէջ ապրող 50 - 55 հազար անգործ աշխատողի համար մարդիկ, որոնք աշխատանք գտնելու եւ ընտանիք պահելու համար արտասահման կը մեկնին:

ՍՈՒՐԻՈՅ ՓՈՐՁԸ ԿՐՆԱՅ ՕԳՏԱԿԱՐ ԸԼԼԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Հայրենի «Ազգ» թերթը կը հաղորդէ, որ Երեւանի մէջ իր դիւանագիտական առաքելութիւնը աւարտող Սուրիոյ դեսպան Համէտ Հասանի հետ իր հանդիպումին ընթացքին Հայաստանի Ազգային Ժողովին նախագահ Արմէն Նազարեան կարծիք յայտնեց, որ տնտեսական դժուարութիւնները յաղթահարելու Սուրիոյ փորձը կրնայ մեծապէս օգտակար ըլլալ Հայաստանի: Ըստ Արմէն Նազարեանի, Հայաստանի եւ Սուրիոյ միջեւ քաղաքական յարաբերութիւնները «պէտք է ամրապնդել տնտեսականով»:

Ան ըսաւ նաեւ, որ 2001ին Սուրիոյ խորհրդարանի նախագահ Ապտէլ Գաոբը Քատուրայի այցելութիւնը Հայաստան կարեւոր նշանակութիւն ունեցած է երկու երկիրներուն երկկողմանի յարաբերութիւններուն համար:

«ՆՈՐ ԱՂՐՊԷՅՅԱՆ» Կ'ԱՌԱՋԱՐԿԵ ԵՐԿԱՐԱԶԳԵԼ ԱԼԻԵԻԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

Ազրպէյճանի իշխող «Նոր Ազրպէյճան» կուսակցութեան ղեկավար էլտար Իպրահիմով առաջարկած է նախագահ Հայտար Ալիեւի հինգ տարուան պաշտօնավարութեան ժամանակը վերածել եօթը տարուան: «Այս մէկը կարեւոր է շրջանին մէջ կայունութիւնը պահելու համար», ըսած է ան:

Բազմաթիւ կառավարամէտ երեսփոխաններ երկրորդած են է. Իպրահիմովի առաջարկին: Ազերի երեսփոխան Անար Ախուրտազատէ նոյնիսկ առաջարկած է մէկ տարիով կրճատել երեսփոխաններուն պաշտօնավարութեան շրջանը՝ աւելի դիւրացնելու համար նախագահին պաշտօնավարութեան երկարաժամկէտը: Այս առաջարկներուն համամիտ գտնուած է նաեւ Ազրպէյճանի խորհրդարանի նախագահ Սուրթուղ Ալիբեքովը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐՈՒ ԿԸ ՀՆԱՐԵՆ ՆՈՐ ՍԱՐՔ ՍԸ

«Արմինֆօ» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, թէ Հայաստանի գիտութիւններու ազգային ակադեմիայի կիրառական բնագիտութեան հիմնարկի գիտնականները հնարած են լուսաւորութիւնը նոր միջոցներ, որոնք հինգ անգամով աւելի ազդու են ներկայիս գոյութիւն ունեցող սարքերէն: Հիմնարկին տնօրէն Ալլալի Մկրտչեան ըսած է, թէ նոր սարքերը ունին բազմաթիւ առաւելութիւններ: Այսպէս, լուսաւորելու ընթացքին անոնց ճառագայթները արեւու ճառագայթներուն նման չուրջի իրերուն կու տան իրենց իսկական գոյնը: Այս սարքերը նաեւ շատ աւելի օժտեմ են եւ միաժամանակ, նուազ ելեկտրականութիւն կը սպառեն: Ըստ հիմնարկին հաշուարկներուն, այս սարքերը նոյնքան ելեկտրականութիւն սպառելով՝ հինգ անգամ աւելի պիտի լուսաւորեն Երեւանի փողոցները: Անոնք նաեւ կրնան գործածուել օդակայաններու եւ այլ տարածքներու մէջ:

Ս. ՍԹԵՓԱՇԻՆ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ ՀԱՅԱՍՏԱՆ

«Իրար-Թասս» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, թէ Ռուսիոյ Տուվայի վերաբնիչ պալատի նախագահ Սեբեդէ Սթեփաշին 17-20 Փետրուարին պիտի այցելէ Հայաստան: Ան հանդիպումներ պիտի ունենայ նախագահ Ռուպէլ Բոչարեանի եւ վարչապետ Անդրանիկ Մանուկեանի, ինչպէս նաեւ Հայաստանի Ազգային Ժողովի վերաբնիչ պալատի նախագահ Աշոտ Տաւադեանի հետ: Ս. Սթեփաշին իր այցելութեան ընթացքին պիտի քննարկէ երկկողմանի համագործակցութեան եւ տնտեսական կապերու առնչուող հարցերը:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● ՎԵՐՋԻՆ օրերուն չէի - աւստրիական սահմանի տարբեր անցքերէն ապօրինաբար Աւստրիա փորձած են անցնիլ 103 գաղթականներ՝ իրաքցիներ: աֆղաններ, վրացիներ եւ 20 հայեր:

● ԱՍՏՎԱԿԱՆ «Ազատութիւն» ռատիոկայանին, 12 Փետրուարին Ձեխիոյ նախագահ Վաչագա Հաւել ընդունած է շարք մը երկիրներու դեսպաններ, որոնց շարքին Գաբէ Աւստրիոյ եւ Ձեխիոյ մէջ Հայաստանի դեսպան Զիւրաբ Թաթևաճեանը (Գետավայրը՝ Վիեննա):

● 20 ՓԵՏՐՈՒՄԻՆ Երեւան պիտի հասնի Հայաստանի մէջ Գերմանիոյ նոր նշանակուած դեսպան Հանս Վուլֆ Պարթեյս:

ՊԱՊԸ ՄԱՅԻՍԻՆ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ ՊԱՔՈՒ

Ազրպէյճանական լրատու աղբիւրներ կը յայտնեն, թէ յառաջիկայ Մայիսին Յովհաննէս Պոլոս Գ. պապը պիտի այցելէ Պաքոն: Այցելութեան ճշգրիտ թուականը տակաւին յստակ չէ: Կր նախագահ Հայտար Ալիեւ «կը լիստան» պալատին մէջ պայտի ի պատիւ ճաշկերոյթ մը տայ: Նաեւ կը նախատեսուի, որ պապը տեսակցութիւն ունենայ կողմասի իսլամներու հոգեւոր պետ շէյխ Ալաջ-չիբիւր Փաշազատէի հետ, որուն հետ պիտի քննարկէ կրօնական կառուցներու համագործակցութեան կարելիութիւնները, ահաբեկչութեան դէմ պայքարի առնչուած հարցեր, ինչպէս նաեւ՝ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման միջոցները: Պապը նաեւ պիտի այցելէ Ղարաբաղի պատերազմին ընթացքին ազերի զոհուածներուն յուշարձան - դամբարանը: Նշեցք, որ այս յուշարձան - դամբարանին մէջ թաղուած են նաեւ 1990ի Յունուարին Պաքոնի հայերը ջարդողները, որոնք հետագային սպանուեցան խորհրդային բանակին կողմէ:

ՊԱՊԸ ՄԱՅԻՍԻՆ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ ՊԱՔՈՒ

Ազրպէյճանական լրատու աղբիւրներ կը յայտնեն, թէ յառաջիկայ Մայիսին Յովհաննէս Պոլոս Գ. պապը պիտի այցելէ Պաքոն: Այցելութեան ճշգրիտ թուականը տակաւին յստակ չէ: Կր նախագահ Հայտար Ալիեւ «կը լիստան» պալատին մէջ պայտի ի պատիւ ճաշկերոյթ մը տայ: Նաեւ կը նախատեսուի, որ պապը տեսակցութիւն ունենայ կողմասի իսլամներու հոգեւոր պետ շէյխ Ալաջ-չիբիւր Փաշազատէի հետ, որուն հետ պիտի քննարկէ կրօնական կառուցներու համագործակցութեան կարելիութիւնները, ահաբեկչութեան դէմ պայքարի առնչուած հարցեր, ինչպէս նաեւ՝ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման միջոցները: Պապը նաեւ պիտի այցելէ Ղարաբաղի պատերազմին ընթացքին ազերի զոհուածներուն յուշարձան - դամբարանը: Նշեցք, որ այս յուշարձան - դամբարանին մէջ թաղուած են նաեւ 1990ի Յունուարին Պաքոնի հայերը ջարդողները, որոնք հետագային սպանուեցան խորհրդային բանակին կողմէ:

STUDIO Lantern • Կը ստանձնէ ռոլայի առիքներու video Գկարահանումներ Հեռ. 01-268868 Ել. 03-695399

ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱԿԵՆՏՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆՂԱՄԱԿՅՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԺՈՂՈՎԻՆ

4 - 7 Փետրուարին Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդի Ժընևի կեդրոնատեղիին մէջ գումար- լեցաւ Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդին անդամակցող եկեղեցիներու իրավիճակը քննարկող եւ անդամակցելու դիմում ներկայացնող նոր եկեղեցիներու դիմումագիրները քննարկող յանձնախումբին ժողովը, որուն մասնակցեցաւ Նարեկ Մ. Վրդ- Ալեմբեգեան:

Յանձնախումբը հանգամանօրէն վերլուծեց Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդին մէջ զանազան յարանուանութիւններ եւ աշխարհագրական տարբեր շրջաններ ներկայացնող եկեղեցիներու առկայութիւնն ու անոնց եկեղեցաբանութիւնը:

Յանձնախումբը պատրաստեց Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդի Գործադիր վարչութեան ներկայացնելիք իր տեղեկագիրը, որ պիտի քննարկուի գալ շարքով, Արամ Ա. վեհափառի նախագահութեամբ գումարուելիք Գործադիր վարչութեան ժողովին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

5 Փետրուարին Ռուսիոյ հայերու միութեան նախագահ Արա Արբահամեան եւ ԻԹԱՐ ԹԱՍ լրատու գործակալութեան տնօրէն Վիթալի Իկնաթեանը այցելեց են Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդարան, ուր հանդիպում ունեցած են առաջնորդ Վաչէ արք. Յովսէփեանի եւ թեմական խորհուրդի անդամներուն հետ:

Արա Արբահամեան եւ Վիթալի Իկնաթեանը Լոս Անճելըս կը գտնուէին Համաշխարհային գործերու խորհուրդի հրահանգով: Արա Արբահամեան հանդիպման ընթացքին Վաչէ արք. Յովսէփեանին յայտնած է, թէ Եզրաս եպոս. Ներսիսեանի առաջնորդութեամբ Ռուսիոյ Հայոց թեմը կը թեմակոխէ զարգացման նոր հանդուս:

Հանդիպումէն ետք, Լոս Անճելըսի հայկական մամուլի ներկայացուցիչները հրաւիրուած են մամուլի ասուլիս մը ունենալու Արա Արբահամեանի եւ Վիթալի Իկնաթեանի հետ:

ՊՈՒԿԱՐԻԱ ԲԱՐԵԿԵՆԳԱՆԸ ՓԼՈՎՏԻԻ ՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ



«Համազգային»ի կից գործող «Հայկական ազատ ակադեմիա»ի կազմակերպութեամբ, 9 Փետրուարին Փլովտիի զգալի տան սրահին մէջ տեղի ունեցած է Բարեկենդանի պարահանդէս, որուն մասնակցած է գաղութի հայութիւնը: Հաւաքոյթը անցած է խանդավառ մթնոլորտի մէջ: Հայկական աւանդութեան հետեւելով՝ ներկաներէն իւրաքանչիւրը իր ձեռով ծպտուած էր:

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏՆԵՐՈՒ ԵԼՈՅԹԸ՝ ՏԻՒՍԵԼՏՈՐՑԻ ՄԷՋ

Գերմանիոյ Տիւսելտորֆ շրջանի Լանկենֆիլտ ար- լարձանի քաղաքային ղահիլիին մէջ, տեղական երգչախումբի 125ամեակին նուիրուած յորեյնական համերգին ընթացքին, հուշակաւոր արուեստագէտներուն կողմէ, համերգային կատարումներով հանդէս եկած են գերմանաբնակ Սաթենիկ Մկրտումեան (մեց- go սոփրանո), Է Հայկ Դէրնեան (պսա):

Հայ մանկատարները երգած են Մոցարթի «Ֆիկա- ռոյի մեռնանութիւնը», «Կախարդական սրինգ», Պէ- գէի «Գարմէն», Վերտիի «Տոն Գարուն», Ռոսինիի «Սե- լիյան սափրիչ» հանրածանօթ օփերաներէն:

Տեղական մամուլը արձագանգած է այս համերգին եւ գնահատանքով անդրադարձած է Հայ արուեստագէտներու կատարումներուն:

ԿԱՐԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՅԵՆ HAMPIG SASSOUNIAN CSP - L.A.C. B - 5 - 131 44750 60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536 — USA www.lemagan.com

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԻՆՉԸ Է ԿԱՐԵՒՈՐՈՒՄ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

«Ազգ»ի հարցազոյցը՝ Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Սարմինի անդամ Գեղամ Մանուկեանի հետ

ՀԱՐՏՈՒՄ.- Ինչպիսի՞նք է Հ. Յ. Դ. վերաբերմունքը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրութիւնների Գկատմամբ, որքանով է երկրացի կարեւորում:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Յանկազած ընտրութիւն եւ իշխանական համակազմ մակարդակի հարց կուսակցութեան համար ունի կարեւոր նշանակութիւն: Փորձը ցոյց է տալիս, որ համակարգային փոփոխութիւնները եւ ժողովրդի վիճակի իրական բարելաւման առումով տեղական ընտրութիւնները կարեւորում եւ արժեւորում են: Հաշուի առնելով մեր կուսակցութեան ասպեկտները համակարգը, երբ ամէն մի շրջանի կուսակցական միաւորը իր շրջանի ամբողջական տէրն ու տիրականն է, մասնակցութիւն ունենալու նպատակով աշխատանքներ իրականացուած են մեր մարզային կամ շրջանային կոմիտէները կողմից: Ի հարկէ, Հայաստանում կայ մի իւրաքանչիւր կուսակցութիւն: Յաւոյսով ենք, որ մասնակցութիւն ունենալու մարմինների ընտրութիւնները երբեք չեն եղել իրենց քաղաքական պայքար, այլ աւելի շատ տեղի այս կամ այն ընտանիքների, գերադասանքների միջեւ պայքար է եղել: Բայց կարծում եմ, որ այս տարի ընտրական կուսակցութիւններն աւելի շատ մասնակցութիւն կ'ունենան՝ յստակ թեկնածուներով:

Հ.- Ներկայիս ընտրական օրէնգրքը հարուստ է քերտիւթիւններով, հսկայական «բաց»երով: Հնարաւոր է Գման օրէնգրքով գնալ ընտրութիւններ:

Պ.- Օրէնսգրքական «բաց»երի մասին խօսակցութիւններ հիմնուած են 1999ի խորհրդարանական ընտրութիւնների փորձի վրայ, եւ մօտ 2 տարի փորձ է արւում լրացնելու այդ «բաց»երը: Որոշակի առաջընթաց կայ քուէարկութիւններին բանակի մասնակցութեան, ընտրացուցակների, յանձնաժողովների հետ կապուած հարցերում: Ներկայումս Ազգային Ժողովում ընտրական օրէնսգրքի փոփոխութիւնների օրինագծի 2 տարբերակ է քննարկուում: Ինչպէս նաեւ քննարկումներ են գնում տարբեր կուսակցութիւնների մասնակցութեամբ: Նշանակութիւնը մեծ է ընտրութիւնները նարարարին դարձնել թափանցիկ, եղած բացերը, որոնցից օգտուում էին որոշ անձինք, լրացնել եւ հնարաւորինս ապահովել արդարութիւնը:

Հ.- Դաշնակցութիւնը վերջերս խորհրդակցելով էր կազմակերպել փտածուբեան դէմ պայքարի թեմայով: Ի՞նչպէս կարելի է պայքարել փտածուբեան դէմ, երբ ապագայ պատգամաւորը, բայց մինչ այդ ուղղակի թեկնածու ոչ միայն չի հրապարակուում իր յատկապէս քրեական անցեալը, այլեւ չի երթարկըւում ոչ մի Գնանակալի սահմանափակման:

Պ.- Իրաւացի էք: Վերջերս նաեւ «Երկիր» շաբաթաթերթին էր այդ փաստին անդրադարձել, որ որեւէ սահմանափակում թեկնածուների կրթական ցենզ, կենսագրութիւն, նոյնիսկ առողջապահական, ինչքան էլ զաւեշտալի լինի, չկայ: Դրանք բացեր են, որոնք եւս պէտք է վերամշակուեն: Ի հարկէ, դա ժողովրդի խորհրդարանն է, Ժողովուրդը պէտք է ընտրի պատգամաւորներին, բայց, այնուամենայնիւ, պէտք է նկատի ունենալ, որ սա արհեստավար խորհրդարան է, մասնագիտական, որտեղ մասնագէտները պէտք է մասնագիտական աշխատանք կատարեն:

Հ.- Ինչպիսի՞նք է Դաշնակցութեան մօտեցումը խորհրդարանական եւ Գնանակալական ապագայ ընտրութիւններին:

Պ.- Պէտք է արուի ամէն ինչ իրեն կուսակցութիւն աւելի մեծ թուով ներկայացուելու համար: Բայց նաեւ բոլոր կուսակցութիւններին խնդրել է անել ամէն ինչ, որպէսզի որեւէ ընտրութիւն լինի տեղական, նախագահական թէ խորհրդարանական, մազաչափ կասկածի տեղիք չտայ: Ուստի վերաբերում է ընտրութիւններին ամբողջական արդարութեամբ: Այս առումով պէտք է հասարակութիւնը, քուէարկող մարդիկ դաս քաղեն բոլոր այն սխալներին ու խորհրդակցութիւններին, որոնք եղել են: Բազմաթիւ են փաստերը, երբ փորձում են ամբողջականութեամբ, ընտրակառուցումը թէ գեղեցիկ կարգախօսներ հետեւելով երբեք չեն ընտրուելու այն գաշինքը կամ կուսակցութիւնը, որը գալու եւ օրնիրուն աշխատելու է երկրի համար:

Հ.- Նախընտրական տարին աշխուժացում է քաղաքական դաշտը: Հ. Յ. Դ. Ի՞նչ Գնանակալական Գնախընտրում՝ դաշինք, քե՞ միայնակ:

Պ.- Առայժմ միջկուսակցական քննարկումներ Դաշնակցութիւնը չի ծաւալել:

Մենք Հայաստանում ունենք այդ փորձը՝ եւ դա՛ չինքների ձեւաւորման, եւ դա՛ չինքների փլուզման: Մեր խորհրդարանի որոշ դաշինքներ եւս դրա վա՛յր լուծուած են:

Դաշինքն ինքնապատակ չէ: Այն ձեւաւորում է գաղափարախօսութեան, ծրագրերի եւ փոխհասկացութեան հիման վրայ: Երկարաժամկէտ դաշինքներն են, որ կարող են գործել: Դրան պէտք է պատասխանատու լինեն հետագայի, իրենց կառուցուածքի համար, պէտք է բարոյական պատասխանատուութիւն եւ հաշուետու լինելու գիտակցութիւն ունենան:

Գրական Էջ

ԻՆՉՊԻՍ ԿԵԱՆՔԸ, ԻՆՉՊԻՍ ԱՍՏՈՒԱԾ...

...Եթե մարգարեական ձիրք ունենամ եւ հասկը-
նամ բոլոր խորհուրդներն ու գիտութիւնները, եւ
եթե լեռները տեղափոխելու չափ հաւատք ունենամ
եւ սերը պակսի ինձի,- ես ոչինչ եմ:
«Թուրք Առ Կորնթացիս» ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Հայ սիրերգութեան ընդհա-
նուրին մասին ընդհանրա-
կան ճաշակ մը փոխանցե-
լու ոչ մէկ փառասիրութիւն կը հե-
տապնդէ բովի սիւնակներով
հրամցուած բանաստեղծութիւննե-
րու փունջը: Դարերու աւանդներով
ու յաւելումներով իր աներեր, ինք-
նադրոջմ եւ եզակի հիմերը հաս-
տատած հայ սիրերգակ քերթողու-
թեան գեթ բնորոշ գոհարները ի մի
խմբելու համար, կարելի չէ ամ-
փոփոխել օրաբերքի մը սուղ սիւ-
նակներուն եւ նոյնիսկ էջերուն
մէջ: Նման լայնածաւալ ծրագիր
մը կարելի է յաջողութեամբ պսա-
կել միայն հաստափոր սիրամատ-
եանի մը էջերու երկայնքին:
Յստակ նկարագիր ու դիմագիծ ու-
նեցող ծաղկաքաղերու չգոյու-
թիւնը - բախտաբեր պարագային
հագուագիտութիւնը - բոլորովին
ուրիշ հարց է: Այդ մասին կարելի
է խօսիլ տարբեր առիթներով: Այ-
սօր, սակայն, մեզ հետաքրքրողը
կեանքի տրամն ու անհեթեթը իր
ողջ ահաւորութեամբ ապրած,
կեանքի հեւասպառ վագրին մէջ
օրըստօրէ աւելի կարծրացող մե-
րօրեայ մարդուն քնքշանալու լուռ
պայպակն է, վեհ, գեղեցիկ, բարի,
ագնիւ եւ յաւերժական անանձնա-
կան արժեքներու վերադառնալու
թեկուզ առեւտրականացուած ան-
սանձ կարօտին յուզիչ դրսեւորու-
մը, որ դրապան ցուցանիշ մըն է եւ
կրնայ վկայել միմիայն գեղեցիկ
հոգեփոխութեան մը երեւոյթին
մասին:

«Սիրոյ Օր»էն իսկ առաջ ամէն
Մայիսին իր «Սիրոյ Տօն»ը գերա-
գոյն հրեւուանքի վերածող հայ ժո-
ղովուրդը պէտք իսկ չունէր այս
օտար կղերականի քաղցր ու յու-
զիչ աւանդութեան քիչ մը աւելի
քաղցրանալու: Անմահ աշուղին
մեծ սիրերգակ Մայր-Նովայի
վարդածակ շիրիմին շուրջ ամէն
գարնան ծաւալող ցնծութիւնը
հպարտառիթ է ըստ ամենայնի:
Ո՛չ մէկ կասկած: Բայց նոյնպէս կաս-
կած է վեր է օտարներուն գեղեցի-
կը, ազնիւը, թանկագինը, անմահն
ու վաւերականը ինքնուրոյնացնե-
լու, աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել
հայացնելու մեր ազգային առաքի-
նութիւնը: Քրիստոնէութեան իբր
կրօն որդեգրումէն սկսեալ, մինչեւ
Ոսկեդար, մինչեւ Զարթօնք եւ մին-
չեւ մեր օրերը: Այս առումով ար-
շալոյսի վառ շողերուն հետ «արե-
գակն արդար»ը լուսակարօտ պա-
ղատանքներով ու աղաչանքներով
ողջունող հայ մարդուն համար հա-
ւանաբար ամէն օր սիրատօնի պէս

Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

ՄԵՂՔԻ ՎԱՐԴԵՐ

Առաջուայ նման չեմ կարող նորից աչքերիդ նայել,
Այնտեղ վառուում են կանաչ կրակով օրերս անցեալ,
Ուր հրկիպուում է մի քնարակիր ու նուրբ մարգարե,
Ու ամբառնում է նրա մոխիրից սատանան դարձեալ...

Այնտեղ ձգուում են խոնար կածաններ այս ուղու նման,
Որ մեկ բերել է հեռու վայրերից նորից իրար մօտ.
Հիմա մի ափ է դարձել այս անափ աշխարհը համայն,
Որ ծովի կողքին անձրեւ է մուրում մինչեւ առաւօտ...:

Այնտեղ փայլում են այս եկեղեցու գմբէթները վէս,
Որ ամէն տեսակ խենթ խոհի վրայ խիղճ են պարտադրում,
Դու, քո պակով, սրբավայրերին ոչ մի պարտք ունես,
Սակայն այս երգով ես տալիքներին մուրհակն եմ գրում...

Յետոյ շէքերն են մէկ առ մէկ վառում լոյսերը իրենց
Ու քո աչքերում վերածում են մի խաւար քաղաքի,
Չէ՞ որ դեռ այնպէս քո աղէտների երկիւքներն են մեծ,
Որ դեռ փլում է արնոտ դիակը մի արեգակի...

Առաջուայ նման չեմ կարող նորից աչքերիդ նայել,
Բայց գիտեմ այնտեղ պիտի որոնեմ օրերս անյայտ...
Որոնք անցկացրի հաւատարմութեամբ, մեծ սիրոյ վայել,
Իսկ գիշերներս մեղքի վարդերով ծածկեցի հատ - հատ...

«Մեղքի վարդեր» - 1989

ՎԱՐՆԻԿ

ԳՈՅՆԵՐ՝ ՍԻՐՈՅ ԾԻԱԾԱՆԷՆ



«Սիւմանքօ եւ Խըզարէ» գործ՝ Գորգէն Մանջեանի

Վերջին տարիներուն աշխարհով մէկ տարածուած երեւոյթներն մէկը
եղաւ «Վալընթայնի Օրը»: Արհեստագիտութեան արագընթաց վերելքին
հետ քիչ մը մեքենացած մերօրեայ մարդը, յանկարծ, կարօտը զգաց
սրտի տաք բաբախումներու եւ սերը կարմիր գոյնով ողողեց
երկրագունդի բոլոր ցամաքամասերը:
Ճիշդ է, որ սերը առեւտրականացուեցաւ, դարձաւ պահանջ - մատուցումի
առարկայ՝ վարդ ու յուշանուէր, այնուամենայնիւ, սիրոյ ապրումը
վարակեց միլիոնաւոր սրտեր եւ ամէն 14 Փետրուարին մարդը
պահ մը ա՛լ աւելի մարդացաւ:
Ստորեւ մեր ընթերցողներուն կը հրամցնենք այս առիթով հայ
ժամանակակից քերթողութեան վարդաստանէն բաղուած
բանաստեղծութիւններու փունջ մը:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՐԵԿՈՆ

Ծիծաղներէ ետք յորտքի, խօսքերէ ետք լրջախոհ,
երէկ մօտիկ, մտերիմ, այսօր դարձար հեռաւոր:

Ու վառեցա՛ւ, վառեցա՛ւ կարօտիս հուրը հզօր,
անմար մնաց որպէս յուշ՝ հրածեշտի երեկոն:

Հին ծանօթներ չէինք մենք, չէինք տեսած շատ իրար,
բայց ողջերբի իբրեւ խօսք՝ ի՛նչ, ի՛նչ ըսի քեզ համար.

Սրտիս անքուն քնարէն ի՛նչ երգեցի ես քեզի,
հազի՛ւ քանի մը հնչիւն, այս տողերը սրտալի...

Ու մեկնեցար հարապատ, բայց հոգւոյս մէջ ամէն օր
կը հուրհրայ, կը յառնէ հրածեշտի երեկոն.

Արդ հառայե՛մ արդեօք, սիրտս լացող թե՛րթ դառնայ
կանչե՛մ, փնտռե՛մ մ վերստին հրածեշտի երեկոն:

Օ՛ ոչ, գիտեմ պիտի գայ սիրատուդ քայլերով
հանդիպումի աստղային, անհրաժե՛շտ երեկոն...

(«Կապույտ ապրիլ» - 1969) ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

ԱՆԽՈՐԱԳԻՐ

Ուսուսի տուած՝ մենք բոլորեցինք
անծիր պատատիի պայծառ ոլորտէն՝
մինչեւ քայքայուող շուրջ ճնճղուկի՝
տարածութիւնը մտերմիկ պահի:

Եղանակ մըն էր, երբ կեռասենին,
շուրթներուդ կարմիր խայծով բռնկած,
կը հողովէր յար անցեալս անկատար,
առաջին սիրոյ անօթիւստութեամբ:

Խառնակ ծամերուդ գանգուրին փարած,
օրուան վերջը նթեր նշոյլին նման,
ի՛նչ յամառութեամբ, ի՛նչ անէութեամբ,

Շուրթերուդ անլուռ գոյնով դրոշմած,
բողբոջ բառերուս փունջը ծիրանի՝
եւ դարձայ խորքը այդ շինջ պաստառին...

ՓԱՆՈՍ ԳԵՐԱՆԵԱՆ

(«Քեզ ինչպէս կոչեմ...» - 1998)

ՉՈՒԳԱՀԵՌԻ ԱՌԱՆՅՔԷՆ

Իմ ու քո միջեւ
Կը թաւալի
Ժամանակի հարկատուն՝
Բազմակէտի
Կապարները ձուլուած՝
Մեր շուրթերուն
Առանցքին մէջ շարելու,
Որոնց միջեւ
Ստորակէտ մ'իսկ չկայ...

Իմ ու քո միջեւ
Կը թաւալի
Ժամանակի հայելին,
Կը բազմանան
Անջատ տողերն սպիտակ,
Սպասումով առջուն,
Մինչ լռելեայն,
Խորհրդաւոր շողկապներ
Անոր անհուն
Ջրհորին մէջ կը շրջին.

Ու ես ու դու,
Կեդրոնախոյս
Մասնիկներու նման ջերմէ խայթուած՝
Կը դառնանք նոյն
Շրջանակին շուրջ դատարկ,
Ուր ոչ մէկ յուշ,
Ոչ մէկ երիպ առանձին
Կրնայ երկնել
Ամբողջութիւնը միւսին:

Իմ ու քո միջեւ
Կը թաւալի
Մեր երգերուն պէս անձայն
Արարչագործ լիութիւնը բնութեան...

(Ապրիլ, 1972) ԽՈՍՐՈՎ ԱՍՈՅԵԱՆ

ԿԻՆԸ՝ ՆՄԱՆ ԾԱՌԻ

Դու՛ն ծառ մըն ես:

Քու վարդագոյն մերկութեան վրայ
- որ մշուշներէ կապումս
հրաշք է հոսուն -
տներէնէրով դալար
նստեր աճած են
ու երկու, մեծ
հապարափերթ ծաղիկներ կան,
որոնցմէ
վաղուայ լոյսը կ'արթննայ:

Կը բանաս դուրը
եւ կը քայլես
ճամբաներէ
խճողուած՝

մեքենաներէ, սրուակներէ, գունաւոր:
ճակատներէ վիրաւոր
եւ բառերէ անիմաստ:
Ճամբուն ցողեր կը կաթին
քու մատներէն ծիւծիւս
եւ անոնցմէ
հսկայ բոյսեր կը ծլին,
որոնք տակաւ, բազմաանալով կը ծածկեն՝
ինքնաշարժներն գունաւոր
եւ դիակները անթաղ...

Յիշողութեան պէս բոսոր՝
խորունկ ձայներ կանգնած են,
ու ճանձրոյթի արտերուն
մատախուղներ լուռ կ'իջնեն:

Դու՛ն ծառ մըն ես, որ կ'աճի
իմ մարմնին մէջ թափանցիկ:
Աչքերուս տեղ
կախարդական թռչուններ կան,
որոնք վայրի պտուղներուդ թոյներէն
արբենալով,
կը թեւածեն
հովերուն մէջ հիւսիսի:

(«Ոսպնեակ» - 1984) ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ



Behind the Scene II Գործ՝ Ռոբերտ Էլիբէկեանի

ՍԻՐԱՀԱՐՈՒԹԻՒՆ

Տեսնել աչքե՛րդ,
Երբ նայում ես ինձ՝
Թէկուզ անտարբեր:

Լսել քո ձայնը,
Շո՛ւկը սրտիդ՝
Երբ դու կաթոգին լռում ես ինձ հետ...:

Սեղմել ձեռքե՛րդ,
Եթէ մինչեւ իսկ տեւի այնքա՛ն կարճ,
Որքան տեւում է երկու տաք բարե՛ւ...:

Երապել սէ՛րդ,
Թէկուզ նա բերի ինձ անքնութիւն,
Բերի հոգու տենդ
Կամ սրտի սարսուռ:

- Ու չե՛մ վարձանում,
Որ այդ բոլո՛րը
Երջանկութիւն են բերում ինձ համար:

(«Գեպի սկիզբ» - 1995) ՎԱՀԷ ԱՐՄԷՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ


ՀԱՄԱԿԱՐԳԻԶ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱՆՇԱՆՆԵՐ ԵՒ ԴՐՕՇԱԿՆԵՐ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ



Լեզուաբանության դոկտ. Լիբ Պարոնեանի պատրաստած «Հայկական խորհրդանշաններ» կայքով անգլերեն և ֆրանսերեն լեզուներով ներկայացրած ուսումնասիրությունը կը պեղէ հայկական զինանշանները, խորհրդանշանները և դրոշակները անցեալն ու ներկայիս:

Կայքին մէջ առանձին բաժիններ յատկացուած են Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետութիւններուն, խորհրդային Հայաստանի, կրօնական իշխանութիւններուն, Արցախի, Նախիջևանի, մշակութային և քաղաքական կազմակերպութիւններուն, ինչպէս նաեւ՝ Հայաստանի պատմութեան մէջ դեր խաղացած տոհմերու դրոշակներուն և զինանշաններուն:

Հայաստանի 1918ի և 1991ի Հանրապետութիւններու նուիրուած բաժինին մէջ կը ներկայացուին Հայաստանի դրոշակին և զինանշանին խորհրդանշական իմաստն ու պատմական զարգացումը:

Կրօնական իշխանութիւններու խորհրդանշաններուն յատկացուած բաժինը կ'ընդգրկէ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան, Մեծի Տանն Կիլիկիոյ կոթողիկոսութեան, Երուսաղէմի պատրիարքութեան, Հայ կաթողիկէ պատրիարքութեան և Հայաստանեայց եկեղեցւոյ կարգ մը թեմերու խորհրդանշաններն ու կնիքները:

Արցախի յատկացուած բաժինը կը ներկայացնէ Արցախի Հանրապետութեան դրոշակն ու զինանշանը՝ իրենց խորհրդանշական իմաստներով: Խորհրդային Հայաստանի յատկացուած բաժինը կը ներկայացնէ Հայաստանի խորհրդանշաններուն մէջ ետք զանազան հանգրուաններու օգտագործուած դրոշակներ և խորհրդանշաններ:

Նախիջևանի բաժինով կարելի է տեսնել ինքնավար այդ շրջանի դրօշին զարգացումը խորհրդանշաններով:

Հակառակ երբեմն իրենց պակասաւոր տուեալներուն, շահեկան են նաեւ հայկական քաղաքապետարաններու, հայ քաղաքական կուսակցութիւններու և մշակութային կառույցներու յատկացուած բաժինները:


Հայաստանի պատմական խորհրդանշաններու բաժինով կը ներկայացուին Արտաշիսեան, Արշակունեաց, Մամիկոնեան, Բագրատունեան, Ռուբինեան և Լուսինեան հարստութիւններու օրով օգտագործուած զինանշաններ:

«Հայկական խորհրդանշաններ» կայքին հասցէն է՝ www.stanford.edu/~baronian/hay.html

ԱՆԳԼԵՐԻՆԷ ՀԱՅԵՐԻՆ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ

Տեղեկատուական արհեստագիտութեան բնագաւառին մէջ հայութեան և հայերէն լեզուին նպաստ բերող որեւէ նախաձեռնութիւն, սիրողական թէ արհեստավարժ մակարդակի, ուրախութիւն կ'առնէ անկասկած: Ազգային անպարծնութեան հարց չէ ասիկա, այլ՝ սեփական անհնարներուն կառչած մնալու ու նաեւ, Չարենցեան արտայայտութեամբ, «ժամանակին շունչը դառնալու» հակադիր բայց ոչ հակասական յանձնառութիւններու արդիւնքն է, թերեւս բնորոշ՝ հին և յարատւող ազգերուն միայն:

Ահա այս ուրախութեամբ կարելի է ողջունել համապատասխան իւրաքանչիւր կայք




Բաժինը կ'ընդգրկէ նաեւ անգլերէն - ռուսերէն ելեկտրոնային բառարան մը՝ 10 հազար բառով: Ընկերութիւնը նշած է, որ հետագային բառարաններէն իւրաքանչիւրին պարունակած բառերուն թիւը պիտի

կարգաչափն ծրագրիներ պատրաստող խումբ մը մասնագէտներու կողմէ հիմնուած այս ընկերութիւնը կը պատրաստէ համակարգչային այլազան ծրագրիներ և կը կատարէ համացանցի կայքերու ձեւաւորման և ծրագրման աշխատանքներ:

«Troy»-ի մասին յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար այցելել www.troy.am և կամ Ե - նամակով կապուել «troy»-ի թեքնիք հարցերու պատասխանատուին (armen@troy.am):

Ընդհանուր նախաճաշակ մը տուած ըլլալու համար ստորեւ կը ներկայացնենք «Troy»-ի անգլերէնէ - հայերէն բառարանէն անգլերէն կարգ մը բառերու թարգմանութիւնը:

- abandon - թողնել, լքել, հրաժարուել, անկաշկանդութիւն, բռնազրօսիկութիւն:
- hasten - շտապեցնել, արագացնել:
- hello - ողջո՛յն
- species - դաս, ցեղ, տիպ, տեսակ, տարատեսակ:
- spectrum - լուսապատկեր, լուսակ, սպեկտր:
- taboo - թապու, արգելում, արգելուած, սուրբ, սրբազան, արգելադրել:
- zloty - դրամական միաւոր (Լեհաստանում):



և ելեկտրոնային ծրագրի, որ իր լուսն կը բերէ հայ գրականութեան, մշակութիւն և Հայ Դատին:

Այս նախաձեռնութիւններուն նորագոյնը կը հանդիսանայ անգլերէն - հայերէն ելեկտրոնային բառարանը, զոր պատրաստած է Հայրենի «Troy» ընկերութիւնը:

Ընկերութեան պաշտօնական կայքին www.troy.am/dictionary

բաժինին մէջ տեղադրուած այս ծրագրին 0,3 «պէթա» տարբերակը 2,3 մեկապայթ ծաւալ ունի և կ'ընդգրկէ շուրջ 20 հազար բառ:

հասնի 30 հազարի: Յիշեալ բառարանները կարելի է ձրիօրէն արձանագրել համացանցի վերջնալ կայքէն: Կարելի է նաեւ կայքին մէջ տեղադրուած «թարգմանիչ» տուեկին մէջ տեղադրել անգլերէն որեւէ բառ և ապա «քլիք» ընել «translate» և ծրագրիւր անմիջապէս պատուիր վրայ պիտի ներկայացնէ տուեալ բառին իմաստը հայերէնով:

Անգլերէնէ - հայերէն բառարանը «Troy» ընկերութեան պատրաստած միակ ծրագրիւր չէ: 2000ի Դեկտեմբերին համար

MESROBIAN TECHNICAL COLLEGE
The Pioneer In Technical Education

COMPUTER COURSES

MESROBIAN COMPUTER LEARNING CENTER

BASIC COURSES
(Windows - Word - Excel - Power Point - Microsoft Outlook - Internet Overview)

SPECIALIZED PROGRAMS

- * **Graphics & Animation**
Adobe Photoshop - Premiere - Illustrator - Corel Draw - Quark Xpress - 3D Studio Max - Free Hand
- * **Computer For Businessmen**
Microsoft Access - Microsoft Project - Microsoft Visual Basic - Visual FoxPro - Dolphin
- * **Computer For Engineers & Architects**
AutoCAD - Auto Architect

3rd Session
MONDAY, 18TH OF FEBRUARY 2002

Arax Street, Bourj Hammoud
Tel: (01) 260504, Fax (01) 262955
E - mail: mesobca@dm.net.lb
Web Site: www.mesrobian.com

ԱՐՇԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՄԵՐՈՒ ԶԵՌՔԻ ՆՇԱՆՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԷՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՂ ՍԱՐՔ

Ռայլն Փեթրսըն ո՛չ համր է, ոչ ալ՝ խուլ, հետեւաբար կարիք չէր, որ զինք միեղ համբերու ձեռքի նշաններ անգլերէնի թարգմանող սարք մը ստեղծելու, այլ՝ ախորժակը: Արդարեւ, 2000ի ամբար, երբ 17ամեայ Փեթրսըն կ'այցելէ իր ծննդավայր Քոլորատոյի «Պըրկըր Բրնկ» ճաշարանը, այնտեղ կը տեսնէ խումբ մը համբեր, որոնք իրենց ճաշերը կ'ապսպրեն համբերու լեզուով, մինչ թարգմանիչ մը իրենց մատներու նշանները կը թարգմանէ անգլերէնի, որպէսզի ճաշարանի պաշտօնեան հասկնայ:



Ռայլն Փեթրսըն և իր պատրաստած թարգմանիչ-ձեռնոցը:

Այս երեւոյթն մղուած՝ Փեթրսըն կը պատրաստէ ելեկտրոնային յատուկ ձեռնոց մը, որ համբերու լեզուն (american sign language) կը թարգմանէ անգլերէնի և թարգմանութիւնը կը տեղադրէ փոքր պատուի մը վրայ: Փեթրսընի գիւտը անցեալ Դեկտեմբերին կ'արժանանայ «Միմըզ Ուէսթիկհայուս Սայլնս էնտ թեքնոլոճի»-ի, ինչպէս նաեւ շարք մը այլ մրցանակներու:

«Համբերու լեզուն թարգմանողներու մեծ պահանջ կայ, և անոնք շատ բարձր գիներ կը պահանջեն. մտածեցի, թէ այս մէկը համբերու համար աւելի անկախ ըլլալու ձեւ մը կրնայ ըլլալ», կ'ըսէ Փեթրսըն:

Փեթրսըն յաջողող ամիսներուն կը բարեփոխէ իր գիւտը՝ առաւել ևս փոքրացնելով ելեկտրոնային ձեռնոցին միացած սարքը: Այժմ ան կը ծրագրէ սարքը շուկայ իջցնել:

Սակայն նոյնիքն Փեթրսըն կը գիտակցի իր գիտին սահմանափակումներուն: «Թարգմանիչը կարելի չէ փոխարինել, և մարդիկ, որոնք չեն կրնար փոսփի տեղ մը կարիքը պիտի ունենան թարգմանիչի», կը հաստատէ ան:

ՍԱՐՁԱԿԱՆ ԿԱՅԵՐ

2002Ի ՉՄԵՌՆԱՅԻՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՅՔԸ

SALT LAKE 2002

Russian romp

Yegudin wins gold, Plushenko silver in skating final

Aligne Skating, Kostelic Captures alpine combined, Cross-Country: Muehlegg wins second gold

BRING ON THE SNOW AND ICE

CHEVY.COM

Սոլթ Լէյք Սիթիի մէջ (Միացեալ Նահանգներ) այս օրերուն ընթացքի մէջ են ձմեռնային ողիմպիական խաղերը, որոնց մասին մանրամասն տեղեկութիւններ ստանալու համար կարելի է այցելել խաղերու պաշտօնական կայքը՝ www.saltlake2002.com:

Կայքը կը ներկայացնէ ձմեռնային բոլոր մարզախաղերը, խաղերուն մասնակից երկիրներն ու մարզիկները, արձանագրուած արդիւնքները և մրցումներու ժամանակացուցակը:

Նշենք, որ Հայաստան 9 մարզիկներով իր մասնակցութիւնը կը բերէ այս խաղերուն:

Պատրաստե՛ք իսպոյի սՈՒՐԱՏԵԱՆ

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ անուարական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումի բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենյակը:

www.homenetmencentral.com



ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՏԵԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐ ՍԱԺԷՍ - Հ. Մ. Ը. Մ. ԵՒ Հ. Մ. Ը. Մ. - ԱՀԻԱԱ ՌԻԱՍԱ

Լիբանանի պատերազմի աղջկանց Ա. դասակարգի ախոյեանություն կիսաարտական հանգրուանին իր առաջին մրցումին (Ֆայնրլ ֆոր), Հ. Մ. Ը. Մ. ի ներկայացուցչական խումբը այսօր՝ Շաբաթ, պիտի մրցի Սաժէսի դէմ: Մրցումը տեղի պիտի ունենայ Ֆուստ Շեհապի դաշտին վրայ, ժամը 20:00ին, նոյն ժամուն տեղի կ'ունենայ կիսաարտական երկրորդ ճակատումը՝ Անդրանիկի եւ Սատաբայի միջև:

Նշենք, թէ տեղի ունենալիք հինգ մրցումներէն երեքին յաղթանակ արձանագրող խումբը, կ'ապահովէ արտական մրցումին իր տունը:

Տղոց Բ. դասակարգի ախոյեանություն կիսաարտական հանգրուանին իր առաջին մրցումին (Ֆայնրլ ֆոր), Հ. Մ. Ը. Մ. ի տղոց ներկայացուցչական խումբը, այսօր Հ. Մ. Ը. Մ. ի «Թնճուկեան» մարզադաշտին վրայ կը հիւրընկալէ Ահիաա Ռիատին. մրցումը տեղի կ'ունենայ ժամը 20:00ին: Նոյն ժամուն տեղի կ'ունենայ Ֆայնրլ ֆորի երկրորդ հանդիպումը՝ Ռիատի Ղալիբի եւ Աննուպինի միջև:

●ԼԻԲԱՆԱՆԻ տղոց Ա. դասակարգի ախոյեանություն ֆայնրլ սիքսի մրցումներուն, այսօր կը սկսին դարձի ճակատումները:

Նշենք, թէ Սաժէս միակ խումբն ըլլալով իր կատարած հինգ մրցումներուն բոլորին ալ յաղթանակ արձանագրած է: Ռիատի արձանագրած է 2 յաղթանակ եւ կրած՝ 3 պարտություն, Անիպալ՝ 3 յաղթանակ եւ 2 պարտություն, Սատաբա՝ 1 յաղթանակ եւ 4 պարտություն, Շանվիլ՝ 3 յաղթանակ եւ 2 պարտություն եւ վերջապէս Անդրանիկ՝ 1 յաղթանակ եւ 4 պարտություն:

Ստորեւ՝ ճրոգ եւ դարձի առաջին հանգրուանի մրցումներուն (Ֆայնրլ սիքսի) յայտագիրը.

| | | |
|------------------|------------|-------------|
| ԱՅՍՕՐ | ԺԱՄ | ՎԱՇՏ |
| Շանվիլ - Սատաբա | 17:00ից | Սաճթրալ |
| ●ՎԱՂԸ | | |
| Սաժէս - Անդրանիկ | 20:30ից | Ղազիր |
| Անիպալ - Ռիատա | 20:30ից | Զահլէ |

ՍՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՏԱՔ ԶԱԿԱՏՈՒՄՆԵՐԻ 25ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԻՆ

Սպանիոյ ֆուտպոլի ախոյեանություն 25րդ հանգրուանին, որ կը սկսի այսօր, տեղի կ'ունենան հետաքրքրական եւ տաք երկու ճակատումներ: Առաջինին Պարսելոնա «Նուրամի»ի մէջ կը հիւրընկալէ Տեփոթիս Բորուան, իսկ երկրորդին, Աթլետիքո Պիլաո «Սան Մամէս»ի մէջ՝ Ռէալ Մատրիդը:

Տեղի ունենալիք այս մրցումներուն նախօրեակին, նշենք, թէ Ռէալ Մատրիդ իր ունեցած կողմնորոշման շնորհիւ միայն կը գերազանցէ իր անմիջական մրցակիցը, 2րդ դիրքը գրաւող Վալենսիան:

Ստորեւ՝ 25րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (մրցումներուն ժամերը՝ Պէրուի ժամանակացոյցով).

| | |
|-----------------------------|------------|
| ԱՅՍՕՐ | ԺԱՄ |
| Աթ. Պիլաո - Ռէալ Մատրիդ | 21:00ին |
| Վիարէալ - Վալենսիա | 22:00ին |
| Պարսելոնա - Տեփ. Բորուան | 22:30ին |
| ՎԱՂԸ | |
| Ալաւես - Ռէալ Պեթիս | 18:00ին |
| Օսասունա - Էսփանիոլ | 18:00ին |
| Ռայո Վալեքանո - Թեներիֆէ | 18:00ին |
| Ռէալ Սարակոսա - Մայորքա | 18:00ին |
| Սեւիլլա - Ռէալ Սոսիէտատ | 18:00ին |
| Լաս Փայմաս - Ռէալ Վալատոլիտ | 20:00ին |
| Սեթիս Վիլո - Մալակա | 21:00ին |

ԱՆԳԼՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՑԱՇԱՐՔ

Ե. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԶԱՅՏԱԳԻՐԸ

Անգլիոյ ֆուտպոլի բաժակի մրցաշարքին Ե. հանգրուանի մրցումներուն, որոնք տեղի պիտի ունենան այսօր եւ վաղը, այդքան ալ հետաքրքրական ճակատումներ տեղի պիտի չունենան նկատի ունենալով, որ մրցաշարքին արդէն իսկ դուրս մնացած են Կորաուր խումբեր, որոնց կարգին՝ բաժակակիր Լիվըրպոլ եւ ախոյեան Մանչեսթըր Եունայթըտ:

Ստորեւ՝ Ե. հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

| | |
|---------------------------|------------|
| ԱՅՍՕՐ | ԺԱՄ |
| Արսենալ - Կիլինկինգ | |
| Միտլըդլպորո - Պլեյքաբըր | |
| Ուոլսոլ - Ֆուլհեմ | |
| Ուէսթ Պրոմուիչ - Չելսի | |
| ●ՎԱՂԸ | |
| Չելսի - Փրեսթըն | |
| Էվըրթըն - Քրու | |
| Նիւքասթլ - Մանչեսթըր Սիթի | |
| Թոթեմհամ - Թրանմիր | |

ՍՈՒԹ ԼԵՅՔ ՍԻԹԻ

ԽՐՈՒԱԹԻԱ ՀԱՇՅԱԻ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՈՍԿԻ ՄԵՏԱԼԸ

Սուր Լէյք Սիթի մէջ (Մ. Ն.) տեղի ունեցող 2002ի Չմեռնային Ողիմպիականի մրցումներուն, որոնք արդէն իսկ այսօր կը թեւակոխեն իրենց առաջին շաբաթը, Խրուաթիա շահեցաւ իր առաջին ոսկի մետալը, շնորհիւ՝ Ժանիքա Բոսթելիչի (20 տարեկան), որ աղջկանց դահուկարշաւի շլայոմի մրցումներուն (զատիվար) գերազանցեց իր մրցակիցները, հակառակ անոր որ ան մրցումը սկսած էր 9րդ դիրքին վրայ:

Ան ոչ թէ միայն Խրուաթիոյ համար



Ալեքսէյ Եակուտիճ

եւ ֆրանսացի ժուրի Մարի - Ռէն լը Կուսիը Չմեռնային Ողիմպիականի մրցումներէն կախակայութեան (իրենց կողմնակալութեան պատճառով), հարցաքննութեան կանչուելէ ետք: Ծաբաթակիցին պիտի յստականայ, թէ անոնք որքանո՞վ պիտի կախակայուին: Ռոկը յայտնեց, թէ Կոյգի սթեյթիկի ցուցադրական մրցումներուն ընթացքին 2րդ դիրքը գրաւող քանատացիներ Ճէյմի Սէյլի եւ Տէյվիտ Փելեթիերի պիտի շնորհուի ոսկի մետալը, թէեւ միւսնոյն ժամանակ ալ Ելենա Պերեժմայայէն եւ Անթոն Սիլարուիլի-ճէն (Ռուսիա) պիտի չլիւրի անոնց շահած ոսկի մետալը:



Ճէյմի Սէյլ եւ Տէյվիտ Փելեթիեր

շահեցաւ առաջին ոսկի մետալը, այլեւ դարձաւ առաջին խրուաթը, որ Չմեռնային Ողիմպիականի մրցումներուն ոսկի մետալի մը կը տիրանար:

Ռուսիա շահեցաւ իր երկրորդ ոսկի մետալը, շնորհիւ 21 տարեկան Ալեքսէյ Եակուտիին, որ տղոց պատ սթեյթիկի ցուցադրական մրցումներուն մեծապէս տպաւորեց ներկայները եւ նոյնիսկ ժուրիի անդամները: Ան դարձաւ առաջին սթեյթըրը (անհատական մրցումներուն), որ Չմեռնային Ողիմպիականի մրցումներուն, տասը ժուրիի անդամներուն չորսին կողմէ կը ստանայ 6 կէտ: Անոր արագակիցը Ելենա Փլուշենքո շահեցաւ արծաթ մետալը, մինչ պրոնկ մետալին տիրացաւ Թիմոթի Կոնպը (Մ. Ն.):

Իր կարգին, Սպանիա շահեցաւ իր երկրորդ ոսկի մետալը, շնորհիւ Եոհան Միլիելիէկի, որ տղոց դահուկարշաւի մրցումներուն (10 քմ.) գրաւեց առաջին դիրքը: Նորվեկիացի Ֆրոտ Էսթիլ եւ Թոմաս Ալվհարտ շահեցան արծաթ մետալը, գրաւելով երկրորդ դիրքը: Պրոնկ մետալ չտրուեցաւ ոեւէ մէկու մը:

Երեկուան շահուած մետալներն աւելի ուշագրաւ եւ գրեթէ ռումբի մը նման պայթուցիկ եղաւ Միջազգային Ողիմպիական

Կոմիտէի նախագահ Ժաք Ռոկըի կատարած յայտարարութիւնը, որ ըսաւ, թէ միջազգային դահուկարշաւի նախագահ Օթալիո Սինքուանթա



Օթալիո Սինքուանթա



Մարի - Ռէն Լը Կուսիը

Ստորեւ՝ մետալներուն դասաւորումը.

| | ՈՍԿԻ | ԱՐԾ. | ՊՐ. |
|----------------------|------|------|-----|
| 1.- Նորվեկիա | 5 | 5 | 0 |
| 2.- Գերմանիա | 4 | 7 | 4 |
| 3.- Մ. Նահանգներ | 3 | 5 | 3 |
| 4.- Ռուսիա | 2 | 3 | 2 |
| 5.- Ֆիլիպին | 2 | 1 | 1 |
| 6.- Իտալիա | 2 | 1 | 0 |
| 7.- Չինացիներ | 2 | 0 | 1 |
| 8.- Սպանիա | 2 | 0 | 0 |
| 9.- Աւստրիա | 1 | 2 | 7 |
| 10.- Քանադա | 1 | 1 | 1 |
| 10.- Ֆրանսա | 1 | 1 | 1 |
| 12.- Հարաւային Կորէա | 1 | 1 | 0 |
| 12.- Հոլանտա | 1 | 1 | 0 |
| 14.- Էսթոնիա | 1 | 0 | 1 |
| 15.- Խրուաթիա | 1 | 0 | 0 |
| 16.- Ճապոն | 0 | 1 | 1 |
| 16.- Լեհաստան | 0 | 1 | 1 |
| 18.- Շուէտ | 0 | 0 | 2 |
| 19.- Պուլկարիա | 0 | 0 | 1 |
| 19.- Չինաստան | 0 | 0 | 1 |
| 19.- Չեխիա | 0 | 0 | 1 |

ՊԼԵԹՐԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ՝ ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ



Նախարար Յովնանեան յուշանուէր մը կը յաճճէ ԳԻՖԱԻ ճախագահ Պլեթրի:

Լիբանան իր այցելութեան ընթացքին, ՖԻՖԱԻ նախագահ Ժոզէֆ Պլեթրը այցելութիւն մը տուաւ (շուրջ 20 վայրկեան) երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուի Յովնանեանի: Ան նաեւ այցելեց Լիբանանի ֆուտպոլի ֆետերասիոնի կեդրոնատեղին: Նախարար Յովնանեան յուշանուէր մը յանձնեց ՖԻՖԱԻ նախագահին, որ իր երկրորդ այցելութիւնը կու տար Լիբանան, Ասիա-2000ի ֆուտպոլի մրցաշարքին ետք, որ տեղի ունեցաւ հիւրընկալ երկրին՝ Լիբանանի մէջ:

ԲԱԼՉԻՕ

Ա. ՍԷ. ՄԻԼԱՆ ՅԱՂԹԱՆԱԿ ՊԻՏԻ ԿԱՐԵՆԱՅ ԱՐՁԱՆԱԳՐԵԼ...

Իտալիոյ ֆուտպոլի ախոյեանություն 23րդ հանգրուանին, պարագլուխի դիրքը գրաւող Ա. Էս. Ռոմա, որ մէկ կէտի առաւելութիւն մը ունի 2րդ դիրքը գրաւող Եուլիենթիսի վրայ, հիւրը պիտի ըլլայ Պրեշիայի:

Եուլիենթիս, որ իր մրցումը պիտի կատարէ այսօր, հիւրընկալելով նախապէք Պրեշիայի դիրքը գրաւող Ֆիորենտինան, յաղթանակի մը պարագային առժամաբար պիտի գրաւէ պարագլուխի դիրքը, սպասելով վաղը տեղի ունենալիք մրցումներուն: Նշենք, թէ իր կատարած վերջին 19 մրցումներուն Եուլիէ պարտություն չէ կրած:

Ա. Սէ. Միլան (ճրոգ), որ իր կատարած վերջին հինգ մրցումներուն յաղթանակ չէ արձանագրած. «Սան Սիրո»ի մէջ պիտի հիւրընկալէ Աթալանթան (13րդ): Անցեալ շաբաթավերջին Ա. Սէ. Միլանի պայքարած համակիրները դժգոհ մնացած էին իրենց կապմէն, որ 1 - 1 արդիւնքով հասարակութիւն մը արձանագրած էր մրցումը ինք մարզիկով աստատած Փերուճիայի հետ:

3րդ դիրքը գրաւող Բնթեր Միլան, որ երկու կէտով ետ կը մնայ Ա. Էս. Ռոմայէն, հիւրը պիտի ըլլայ Վերոնայի (7րդ):

Ստորեւ՝ 23րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (մրցումները՝ Պէրուի ժամանակացոյցով).

| | |
|----------------------------|------------|
| ԱՅՍՕՐ | ԺԱՄ |
| Եուլիենթիս - Ֆիորենտինա | 16:00ից |
| Ա. Սէ. Միլան - Աթալանթա | 21:30ից |
| ՎԱՂԸ | |
| Պրեշիա - Ա. Էս. Ռոմա | 16:00ից |
| Փարմա - Թորինո | 16:00ից |
| Փերուճիա - Լեչէ | 16:00ից |
| Փիաչենցա - Վենցիա | 16:00ից |
| Ուտինէթէ - Պոլոնիա | 16:00ից |
| Վերոնա - Ինթեր Միլան | 16:00ից |
| Լացիո Ռոմա - Զիլետո Վերոնա | 21:30ից |

ՄԱՅՐ ԹԱԳՈՒՀԻՆ ՆԵՐԿԱՅ...

Շարունակուած 3րդ ԷլէԳ

Մայր թագուհին Սանտրինկիէմէն ուղղաթիւնով ուղղուեցաւ Ուինստըր: Ան նախանցեալ օր սայթաքած էր եւ կոտորած՝ իր թելը:

Մարկարթէ իշխանուհին անցեալ շաբաթավերջին մահացաւ սրտի տագնապի պատճառով: Իր կտակին մէջ ան խնդրած է, որ իր դիակը չթաղեն, այլ այրեն եւ աճիւնները տեղադրեն իր հօր՝ ճորճ Գ. թագաւորին գերեզմանին քով: Մարկարթէ իշխանուհին նշած է նաեւ, որ չ'ուզէր ընտանիքի անդամներէն մէկը ներկայ գտնուի դիակին հրկիպման արարողութեան:

www.homenetmencentral.com

ՄԻԼՈՇԵՒԻՉ ՕԹԱՆԸ ...

Ծարուակուած Ա. ԷջԸԸ

թեան դէմ ուժիւնք» գործած է: Դէտեր կ'ըսեն, թէ ՕԹԱՆի դէմ անոր հակա- յարակումներուն իրաւական արժէքը կասկա- ժելի է, սակայն անոնք կրնան քաղաքական ու- ժեղ անդրադարձ ունենալ՝ յատկապէս Եուրո- լաիոյ մէջ:

Եուրոպայի բարեկարգչական կառավա- րութիւնը, որ Միլոշեւիչը Լա <էյի ատեանին յանձնած էր, երէկ անոր վկայութիւնը մահուան էր քանդուած պատկերներու «պօզալի» չարա- շահում կոչած է՝ իր դէմ ուղղուած ամբաստա- նութիւնները շեշտելու համար:

ՈՌԻՍՈՅ ՏՈՒՄԱՆ ԼԱ ՎԵՅԻ ԱՏԵԱՆԸ ԿԸ ԸՆՆԱԳՍԷ

Ռուսիոյ խորհրդարանը երէկ Լա <էյի ատե- անը կոչած է «քաղաքական» դատարան մը, որ Եուրոպայի 1999 թրեոյ նախագահ Ար- սլուան Միլոշեւիչի դէմ օգային պատերազմի օրերուն գործած վայրագութեանց համար ՕԹԱՆեան պետութիւնները չէ ամբաստանած:

Պետական Տուման յայտնած է, թէ Լա <էյի ատե- անը կողմնակալ է: Անկա կոչ ուղղած է նախա- գահ Վլասիմիր Փութինի, որ ՄԱԿի Ապահովու- թեան Խորհուրդին դիմէ, որ այս վերջինը ժամա- նակ սահմանէ անոր գործունէութեանց:

Ծարայեղ ազգայնական ղեկավար Վլասի- միր Փիլիպոպի յայտնած է, թէ Ռաշինկթըն ատեանը ստեղծած է «դատելու համար Եւրո- պայի մէջ բոլոր հայրենասէրները»:

Բազմաթիւ ռուսերու կարծիքով, ՕԹԱՆի դե- կավարները պէտք է դուստական հետապնդում- ներու ենթակուծն Եուրոպայի ոչ 11 շաբ- թուան նմանակումներուն ընթացքին արձա- նագրուած քաղաքային կոնտրոլի համար:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԻՍԼԱՄ ՌԻՍԱԿԱԿՈՐՆԵՐ...

Ծարուակուած Ա. ԷջԸԸ

Քննութիւն տանելու համար: Բազմաթիւ օգակայանին մէջ հարիւրաւոր ուխտա- ւորներ՝ չափազանց ցած ջերմաստիճաններու մէջ, կը սպասեն որպէսզի Մէուտական Արաբիա մեկնին՝ ժամկէտէն առաջ: Աֆղանիստանի ամբողջ տարած- քէն հազարաւոր ուրիշներ կը սպասեն Բազմաթիւ գլխաւոր մզկիթին մէջ:

Չարորոշ արձանագրուած է նաեւ հարաւային Գանատար քաղաքին մէջ, որը պաշտօնատարներ սպասող հազարաւոր ուխտաւորներու յայտնած են, թէ քաղաքին օդակայանը հակակշիռի տակ առած ամերիկեան ուժերը մերժած են արտօնութիւն տալ իրենց, որ գայն գործածեն. տասնամեակներէ ի վեր առաջին անգամ ըլլալով հաժի մեկնող ոչ մէկ օդա- նաւ թռիչք առած է քաղաքէն:

ՈՌԻՍ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐ ԿՐԱՆ ԳՏՆՈՒԻ ԿՈՒՆՔԱՆԱՍՈՅԻ ԲԱՆՏԻՆ ՄԵՋ

Միւս կողմէ, Ռուսիոյ արտաքին գործոց նախա- րար Իկոր Իվանով երէկ յայտնած է, թէ Ռուսիա ու- նի «նախնական տեղեկութիւններ», ըստ որոնց, իր քաղաքացիներէն արգելափակուած են Բուսպայի Կուանթանմոյի ամերիկեան բանտին մէջ:

Փարիզի մէջ Ֆրանսացի իր պաշտօնակիցին՝ Իւպէր Վետրինի հետ տեսակցութեան մը ետք, ան մամուլը առ- լիսի մը ընթացքին յայտնած է, թէ Մոսկուա Ռաշինկ- թընի հետ հաղորդակցութեան մէջ է նշեալ հարցով:

254 հոգի բանտարկուած է Կուանթանմոյի մէջ՝ Թալեպան կամ Ռուսոն Պըն Լատէնի «Քաշիտա» ցանցին մաս կազմելու յանցանքով:

Ըստ «Ինթերֆաքս» լրատու գործակալութեան, յառա- ջիկայ քանի մը օրերուն Ռուսական խմբակ մը Կուանթա- նմոյ պիտի մեկնի քննութիւն տանելու համար:

ՓԵՌԸ ԿԸ ԶԳՈՒՅԱՅՆ Մ. ՆԱՇԱԳՆԵՐ

Ե. Միութեան արտաքին հարցերու պատասխանա- տու Քրիս Փէթրն երէկ գոչուցուցած է Մ. Նախագե- ները, հրաժարելու իր միակողմանի «քննազոյն», մինչ նախագահ ձորճ Պուշի «չարութեան առանցք»ին գծով Ռաշինկթընի եւ Պրիւքսէլի միջեւ ծայր տուած խօսքերու պատերազմը թափ կը ստանար:

Փէթրն «Յայնեճըլլ Թայմզ» թերթին մէջ գրած է, թէ կենսական է, որ Մ. Նախագեներ առանձին յար- ձակումներու չձեռնարկեն՝ Աֆղանիստանի մէջ զին- տորական արշաւին անսպասելիօրէն արագ յաղթա- նակէն ետք:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԱՆՇԱԿԱԿՇԻՌ ԿԱՅՈՒԹԻՒՆ...

Ծարուակուած Ա. ԷջԸԸ

ՍՈՒՊԱՐԱՔ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՇԱԳՆԵՐ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ

ղութեան պատասխանատուու- թիւնը ստանձնեց «Սալահուտի- նի Փաղանգը» անունով ծայրայե- ղական նոր խմբակ մը:

Համապի պաշտօնատարներէն՝ Իսմայիլ Ապու Շանայ, ըսաւ, որ սահիկա նոր իրադարձութիւն մըն է իսրայէլեան հրաայլերուն դէմ: Ան աւելցուց, որ Իսրայէլի դէմ ընդ- դիմադրութիւնը պիտի շարունակ- լի մինչեւ որ իսրայէլեան ուժերը հեռանան պաղեստինեան հողե- րէն:

Այսրորդանանեան Սայտա գի- ղը ներխուժած իսրայէլեան ուժերը առաջնորդող գնդապետը սպան- նուցաւ գործողութեան ընթաց- քին, երբ ծայրայեղականներու փնտրուած փախուի քանդուած բնակարանի մը պատը վրան ին- կաւ: Բնակարանը քանդուած էր ներխուժող ուժերուն կողմէ: Էալ Ռայս կը նկատուէր ընտրանի քո- մանո ուժերու պատասխանատու- ներէն մէկը:

Միւս կողմէ, եւրոպացի դիւա- նագետները արտաքին իրենց այ- ցելութիւնները, վերահաստատե- լով անհրաժեշտութիւնը պաշտ- վութեան հաստատումն ու երաշ- խաւորման: Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար ձէք Սթոու արտ- սելէ ետք երկօրեայ այցելութիւնը, Լոնտոն վերադարձաւ: Ան տեսա- կոչութիւններ ունեցած էր իսրայէլա- ցի ու պաղեստինցի բարձրաստի- ճան պաշտօնատարներու հետ: Իսկ Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Եռչքա Ֆիշլը շարու- նակեց տեսակցութիւնները: Եր- կուքն ալ չկրցան հանդիպում ու- նենալ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի հետ, որ քանի մը օրէ ի վեր անհանգիստ է:

Ֆիշլը եւ Սթոու անուղղակի կեր- պով յորսվիզ կանգնեցան ամե- րիկեան տեսակցութիւն, որ կը պա- հանջէ նախ պաշտօնակցութիւնը երաշխաւորել ու պալ՝ բանակցու- թիւններուն վերվկիլը: Եւրոպա- կան Միութեան տեսակցութիւնը պա- հան չէ սակայն: Ե. Միութիւնը կը հաստատէ, որ պաշտօնակցութիւնը հե- տապնդելու կողքին, պէտք է քա- ղաքական ճիգերու ալ ձեռնարկել բանակցութիւններու ձամբով:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՄՊԱՆԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ...

Ծարուակուած Յրդ ԷջԸԸ

ԷԹՄ անջատողա- կան խմբակին դէմ ս պ ա ն ա ց ի ն եր ու ն մ ղ ա յ Ֆրանսացիներուն բերած օժանդա- կութեան գծով Ռաճոյ շնորհակալութիւն յայտնեց Վաշինգի:

«Համաձայնեցանք կարելի եղած բոլոր միջոցներով համա- գործակցիլ՝ հաւատա- լով այն գաղափարին, որ սալահուժական ու- ձերու կողմէ համա- կարգուած եւ յստակ աշխատանքը որոշիչ ղեր պիտի ունենայ ահաբեկչութեան դէմ տարած մեր պայքա- րին մէջ», ըսաւ Ռաճոյ:

Վաշինգի ընդգծեց, որ Սպանիա եւ Ֆրանս- սա նպատակադրած են ահաբեկչութեան դէմ պայքարիլ, պայն արմատախիլ ընելու համար: «Երբ ահա- բեկչական գործողու- թիւններ կը կատար- ւին անոնց պատաս- խանատուները ձերքա- կայելը լաւ գործ է, սա- ղայն աւելի լաւ պիտի ըլ- լայ, եթէ վստուք ձերքա- կայելը նախքան գործ- ղութեան մը գործադրու- թիւնը», աւելցուց ան:

ԶՈՄՍՔԻԻ ԴԷՄ ՓԱՏՏԵՐ...

Ծարուակուած Ա. ԷջԸԸ

րը բարեկարգէ: Անիկա կ'անկախէ, որ լեզուա- կան եւ մշակութային այլ իրաւունքներու գծով (օրինակ՝ քիւրտ փոքրա- մասնութեան վերաբերող իրաւունքներուն) ար- գելները ջնջուին անդա- մակցութեան առնչու- թեամբ բանակցութեանց սկսուածն առաջ:

Էմ. Այ. Թի. ի լեզուա- բանութեան փորձեօթոր՝ Չոմսքի, այս շարքի թուրքիա կը գտնուէր՝ իր 22 տարեկան հրատա- րակիչին՝ Ֆաթիհ Թաշի գրատպութեան ներ- կայ գտնուելու համար: Թաշ Չոմսքիի գործը թրքերէնի թարգմանած է:

Պոստոյ մէկ ատենը Չոմսքի թրքի օր ան- պարտ արձակած էր թա- շը այն ամբաստանու- թիւններէն, թէ ան պե- տութեան միասնակա- նութիւնը վտանգած է՝ հրատարակելով Չոմսքիի այն ամբաստանութիւն- ները, թէ թուրքիա ճնշած է իր քիւրտ փոք- րամասնութիւնը:

Չոմսքի Հինգշաբթի օր Տիարպէթի այցելած է եւ Ուրբաթ օր մեկնած թուրքիայէն:

կոչ ուղղելով թրքական դպրոցներուն մէջ քրտե- րէն ուսման: Իշխանութիւնները ու- նին այն մտաւախու- թիւնը, թէ մշակութային յաւելեալ իրաւունքներ կրնան մղել քիւրտերը յաւելեալ ինքնավարու- թիւն պահանջելու:

ՈՍԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԶԻՐՏ ԶՈՒՑԱՐԱՐՆԵՐ ԿԸ ՉԵՐԲԱԿԱԼԷ

Միւս կողմէ, ոստիկա- նութիւնը Հինգշաբթի գիշեր շուրջ 100 հոգի ձերքակալած է հարաւ- արեւելեան Թուրքիոյ մէջ՝ քիւրտ անջատողական ղեկավար Ապտիլյա Օճալանի ձերքակալու- թեան երրորդ տարեդար- ձին առիթով ծայր տուած բողոքի ցոյցերէ ետք:

Հինգ հոգի վիրաւոր- ւած է ոստիկանութեան հետ բախումներու ըն- թացքին: Ականատեսներու հա- մաձայն, ոստիկանու- թիւնը շրջանային մայ- րաքաղաք Տիարպէթիի մէջ պահակութեան մի- ջոցառումները ամբարշտ- դած է Ուրբաթ օր: Ապա- հովութեան հսկող հա- րիւրաւոր զինուորներ փողոցները շրջապալած են՝ ինքնաշարժներն ու մարդիկը խուզարկելով:

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5079 Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

| | | | | | | | | | | | |
|----|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1 | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | | | |
| 6 | | | | | | | | | | | |
| 7 | | | | | | | | | | | |
| 8 | | | | | | | | | | | |
| 9 | | | | | | | | | | | |
| 10 | | | | | | | | | | | |
| 11 | | | | | | | | | | | |

- | | |
|--|---|
| ՇՈՐԻԶՈՒԱԿԱՆ | ՈՒՂԱՆԱՅԵԱՑ |
| 1. Փայլուն, լուսաւոր - Բուխբիկ: | 1. Քրոմպիոյ մայրա- քաղաքը - Ցուցական անկան: |
| 2. Շիտակ - Թուշուհնե- րու դադար: | 2. Սիւբ - Հուղկահար, յելուզակ: |
| 3. Կանացի ուսանոց - Բաղըր (հակ.): | 3. Ողորկել - Ցուցա- կան դերանուն: |
| 4. Առաջնորդ, գլխաւոր: | 4. Մորթային բիծ Անհաստատ: |
| 5. Նուաղիլ, ուշաթափիլ - Արական օտար անուն: | 5. Ճիչ, պոռչուող - Իգական օտար անուն: |
| 6. Խաղաթուղթի մէկ- նոց - Թաքուն պայթու- ցիկ - Մակաւ: | 6. Ամուսին, կողակից: |
| 7. Ցուրտ - Բախուկ, խենթուկ: | 7. Հարեմ, խորոպճիւն: |
| 8. Լման կտոր - Օս- մանեան շրջանի հայ ան- ւանի ճարտարպետ: | 8. Գրաւած տարածու- թիւն - Բարակ բացուած հաց: |
| 9. Ժամի երգիչ - ցու- ցական անկան: | 9. Ցուզուած կամ քե- նոսած - Փոխանակ - Տա- ու ժը անունը: |
| 10. Որոշուած գին - Հողակոշտեր փշրելու գործիք: | 10. Պատուար - Հոգե- գաւակ: |
| 11. Մուկերու ծուղակ - Հաստատութիւն: | 11. Պատկերող ար- ւեստագէտ - Մենաստան: |

ԹԻԻ 5078

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

| | | | | | | | | | | | |
|----|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 4 | Ո | Գ | Ի | Ճ | Տ | Օ | Ս | Ա | Կ | Ի |
| 2 | Ա | Ս | Ր | Ա | Խ | Ա | Ն | Կ | Ի | Կ | Ի |
| 3 | Հ | Ո | Ղ | Ա | Մ | Ղ | Գ | Ա | Ս | Ս | Ս |
| 4 | Խ | Ա | Ի | Թ | Ա | Մ | Ի | Տ | Տ | Տ | Տ |
| 5 | Հ | Ի | Թ | Թ | Ա | Մ | Ի | Տ | Ի | Հ | Հ |
| 6 | Ա | Թ | Ե | Պ | Գ | Ի | Թ | Բ | Ե | Ե | Ե |
| 7 | Մ | Ա | Ր | Ա | Մ | Գ | Բ | Ե | Ն | Ն | Ն |
| 8 | Տ | Տ | Տ | Տ | Ա | Ն | Կ | Ի | Վ | Պ | Վ |
| 9 | Ա | Ս | Ր | Ա | Մ | Ղ | Ա | Մ | Թ | Թ | Թ |
| 10 | Կ | Ո | Ղ | Ղ | Ա | Ի | Մ | Ա | Ր | Ր | Ր |
| 11 | Ն | Ա | Ր | Ի | Ն | Ջ | Տ | Ր | Ե | Ե | Ե |

Յ. Ա. ՏՈՒՐՔԻ ՄԻԱԿ ...

Ծարուակուած Յրդ ԷջԸԸ

ԱՂԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԸՆՆԱԳՍԷ

Ալատական Կուսակցութեան ղեկավարու- թիւնը Տորի Շամունի գլխաւորութեամբ երէկ գումարուած իր ժողովին ետք հաղորդագրու- թեամբ մը ըսաւ, որ առեւտրական միակ ներկա- յացուցիչի դրութեան շնչումի որդապատճառ- ները տնտեսական չեն եւ իշխանաւորները կը հետապնդեն յայտարարուածէն տարբեր նպա- տակներ:

«Այս որոշումը արդարացելու համար կարե- լի չէ առաջ քշել Միջպագային Առեւտրի Կա- մակերպութեան եւ Եւրոպայի հետ գործընկե- րութեան պայմանները, մասնաւոր որ իշխա- նաւորները այս որոշումին գծով չեն խորհրդ- կալցած տնտեսական մարմիններուն հետ», ըսաւ հաղորդապատկերին:

ԽԱՐԹՈՒՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ...

Ծարուակուած Յրդ ԷջԸԸ

Անցնող քանի մը ամիսներուն, սակայն թափ ստացան Սուտանի տագնապին վերջ տալու մի- ջապագային նախաձեռնութիւնները, որոնց կար- գին է ամերիկեանը: Իսմայիլ դիտել տուաւ, որ ամիսներ յատկանշական ու քաջարկական երեւոյ- թը Ռաշինկթընի հետաքրքրութիւնն ու նախա- ձեռնութիւնն է, որովհետեւ անոր օրինակին հե- տեւելով՝ եւրոպացիներն ալ գործի լծուած են:

ՖԱԼՈՒՆ ԿՈՆԿԻ...

Ծարուակուած Յրդ ԷջԸԸ

ղարկած է Չինաստան հարցեր ստեղծելու եւ չարիք բարկելու, խանգարելու համար երկի- րին խաղաղ մթնոլորտը եւ խախտելու համար ընկերային պաշտօնակցութիւնը, յայտնեց արտա- քին գործոց նախարարութեան մէկ բանաբերը:

Միւս կողմէ, ամերիկեան ղեկապետներն մէկ բանաբերը նշեց, որ ձերքակալութիւններն 33ը ամե- րիկացիներ են եւ վտարուած են Չինաստանէն:

ՃԱՏՐԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՆ ԼՈՒԾՈՒՄԸ

1. Քx7+ Գ7 2. Քx7# [2. hx7#] 1-0
- 1... Գ2+ 2. Փ5 Սd6# 0-1
- 1... Գ4+ 2. Գ2 Քx2# 0-1
1. Սa8+ Գe8!? 2. Գxe8# [2. Քxe8#] 1-0
1. Քxd7+ Քxd7 2. Զc7# 1-0

ԿԸ ՓՆՏՈՒԹԻ ԵՐԳԻ ՄԸ ՀԵՂԻՆԱԿԸ

Կը փնտրուին «Կուլեմ լինել» երգին խօսքերը գրող եւ երաժշտութիւնը յորինող անձերը: Այս երգը ի յայտ եկած, յորինուած է Հայաստան՝ 80ական թուականներու վերջերը կամ 90ականներուն սկիզբը, սփիւռքահայ ուսանող - երաժիշտի մը կողմէ: Հետեւեալն է երգին առաջին տունը.

«Կուլեմ լինել քեզ հետ մենակ
Քո իրանից բռնած բարակ
Ու համբուրեմ արցունքները
Թուխ աչքերիդ...»

Երգին հեղինակը պիտի վարձատրուի հեղինակային իրաւունքներով: Իսկ ան, որ լսած է կամ կը ճանչնայ այս երգը յորինողները, կը խնդրուի դիմել՝

**Photo and Printing Promoters,
Fax: 04/710849,
Ե-Նամակ.- sarosero@hotmail.com**